20 ՄԱՐՏ 2013 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 41(5124)

Ազգ

Azg

ISSN: 1829-1651

# Վատիկանում տեղի ունեցավ նոր պապի գահակալությունը




Վատիկանում մարտի 19-ին Կաթոլիկ եկեղեցու նոր հովվապետ Ֆրանցիսկ պապի գահակալման արարողությանը, Ֆրանսպրեսի տվյալներով, ներկա էին շուրջ 300 հազար հավատացյալներ: Հանդիսավոր ժամերգությունից հետո պապը ողջունեց ժողովրդին եւ հյուրերին՝ 150-ից ավելի պատվիրակությունների անդամներին: Մասնավորապես ՀՀ պատվիրակության կազմում էին հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը եւ Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ն:

Արարողության առավել հանդիսավոր պահը եւ բարձրակետը դարձավ պապական իշխանության խորհրդանշանների հանձնումը: Դրանք են ոչխարի բրդից պատրաստված եւ թանկարժեք քարերով զարդարված սպիտակ ժապավենը՝ պալլիումը եւ ձկնորսի մատանին: Վերջինս ակնարկում է Պետրոս առաքյալին, որի իրավահաջորդն է համարվում Հռոմի պապը:

Յուրաքանչյուր պապի համար այդ մատանին նորացվում է: Իրեն բնորոշ համեստությամբ Ֆրանցիսկ պապը խնդրել էր, որ իր համար պատրաստեն ոչ թե ոսկյա, այլ արծաթյա ոսկեջրած մատանի:

Սուրբ Պետրոսի հրապարակում պապը հավատացյալներին ողջունում էր ոչ թե «պապամոբիլից», այլ բաց ջիպից: Նա բազմիցս կանգ առավ ներկաներին օրհնելու համար:

Գահակալման արարողությունը կատարվում է իբրեւ ավանդույթ, սակայն պաշտոնապես Ֆրանցիսկ պապը իր լիազորությունները ստացել էր արդեն մարտի 13-ի ընտրություններից հետո: Պապն արդեն կազմել է աշխատանքային ծրագրեր: Մասնավորապես այսօր նա հանդիպում կունենա քրիստոնեական եկեղեցիների ներկայացուցիչների հետ:




# Սերժը՝ Րաֆֆուն, եւ ընդհակառակը

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Սերժ Սարգսյան-Րաֆֆի Հովհաննիսյան հեռակա բանավեճն այդպես էլ չհանգուցալուծվեց նույնիսկ նախագահի Սարգսյանի՝ երկուշաբթի մի շարք լրատվամիջոցների ներկայացուցիչներին տված հարցազրույցից հետո, քանի որ Րաֆֆի Հովհաննիսյանն էլ երեկ Ազատության հրապարակում պատասխանեց Սերժ Սարգսյանին:

Նախագահ Սարգսյանը Սարգսյան-Հովհաննիսյան հետընտրական հանդիպման փակագծերը բացելու առաջարկին ի պատասխան նախ ասել էր, թե աղճատված, ոչ ստույգ տեղեկություններ էին տալիս հանրությանը Րաֆֆի Հովհաննիսյանն ու այն մարդիկ, որոնք ներկա չեն եղել հանդիպմանը, ապա. «Ես բառացիորեն ասել եմ՝ Րաֆֆի՛, մինչեւ անելիքներին անցնելը, ես երկու հարց ունեմ. հարց առաջին՝ դու հաղթե՞լ ես ընտրություններում: Ասաց՝ ոչ: Ասացի՝ բա ի՞նչ է եղել: Ասաց՝ մերոնք ասում են, որ Դուք էլ չեք հաղթել: Ասացի՝ Րաֆֆի՛, դու չես հաղթել, ես չեմ հաղթել, բա ո՞վ է հաղթել: Պարոն Հովհաննիսյանը ժպտաց, եւ ես անցա երկրորդ հարցին: Հարցրեցի՝ քարոզարշավի ընթացքում ինքն ինձնից լսե՞լ է արդյոք մի անձնական վիրավորանք, մի կոշտ ձեւակերպում, բացի մեկ դեպքից, երբ ես գնահատականը տվել եմ երեւույթին, որովհետեւ չափազանց կարեւոր երեւույթ էր:

Եթե այդ մասին հարց լինի՝ ես կպատասխանեմ, եթե ոչ՝ ինքս կբացեմ դա: Պարոն Հովհաննիսյանն ինձ բացատրեց, որ իր խոսքի կոշտության պատճառն այն է, որ ես ժամանակից շուտ իմ շրջապատում շամպայնով շնորհավորել եմ իմ հաղթանակը»: Նախագահ Սարգսյանն, իր խոսքով, Րաֆֆուն ասել է, թե շնորհակալություն է հայտնել իր գործընկերներին, իրեն կողմ քվեարկողներին, երբ ԿԸՀ-ն ամփոփել էր ընտրությունների նախնական արդյունքները բոլոր 1988 տեղամասերում, եւ այդ եղել է առանց շամպայնի: Րաֆֆին ասել է Սարգսյանին, թե լավ կլինի անցկացնել նախագահական նոր ընտրություններ, Նախագահ Սարգսյանն էլ պատասխանել է, թե չի տեսնում դրա հնարավորությունը, բայց նույնիսկ եթե լիներ, վստա՞հ է, որ նոր ընտրություններում կգրավի, ասենք, 4-րդ տեղը, քանի որ նոր ընտրությունների դեպքում նոր թեկնածուներ կառաջադրվեն: Րաֆֆին էլ ասել է, թե ինքն առաջարկում է՝ «ընտրություն մեր միջեւ». «Ասացի՝ դրա տարբերակն էլ չկա, որովհետեւ միջազգային հանրությունը, մեր ժողովրդի ճնշող մեծամասնությունը ընտրությունների արդյունքն ընդունել է եւ գնահատել է լավ: Բայց եթե հանկարծ ինչ-որ մի հրաշքով այդպիսի հնարավորություն լինի, եւ մենք Ձեզ հետ անցկացնենք նախագահական ընտրություններ, եւ ինչ-որ մի հրաշքով Դուք տանեք ձայների 55 տոկոսը, մնացած 45 տոկոսը ես կարո՞ղ եմ տանել: Ասաց՝ այո: Ասացի՝ այդ դեպքում, ես կարո՞ղ եմ ընդհանրապես մի 20 հազար մարդ հավաքել Ազատության կամ Հանրապետության հրապարակում: Ասաց՝ այո: Ասացի՝ դա 4 անգամ ավելին է, քան այսօր դու ես հավաքել: Այդ դեպքում, ես էլ կհավաքեմ այդ 20 հազար մարդկանց եւ կասեմ՝ եթե Րաֆֆի Հովհաննիսյանն իր 37 տոկոս քվեներով նոր ընտրություններ պահանջեց եւ անցկացրեց, ապա ես էլ եմ պահանջում նոր ընտրություններ: Այդ դեպքում ո՞ւր ենք գնալու, մինչեւ ե՞րբ»:

Րաֆֆու՝ խորհրդարանը ցրելու պահանջի համար էլ Նախագահ Սարգսյանը պատճառ չի տեսել, սահմանադրությամբ էլ նախագահը չի կարող խորհրդարան լուծարել, իսկ Րաֆֆին էլ ասել է՝ բոլորին հրավիրեք, ստիպեք, որ մանդատը վայր դնեն. եւ նախագահը պատասխանել է, թե դա օրինական ճանապարհ չէ, եւ դեռ նշել, որ մի հրաշքով եթե այդպիսի բան լինի, Ր. Հովհաննիսյանը վստա՞հ է, որ 5 տոկոսը կհաղթահարեն:

Տես էջ 2

# Տասը թվայնացված ցուցանմուշներ Հայոց ցեղասպանության մասին

Ընդհանրապես աշխարհասփյուռ հայկական համայնքներին եւ մասնավորապես ուսումնական հաստատություններին որպես հասարակական ծառայություն՝ Եղեռնի առաջիկա տարելիցի նախօրյակին Հայ ազգային ինստիտուտը (ANI), Ամերիկայի Հայոց ցեղասպանության թանգարանը (AGMA) եւ Ամերիկայի հայկական ասամբլեան (AAA) համատեղ հայտարարությամբ տեղեկացնում են, որ հրապարակ են հանել 10 պլակատների թվայնացված ցուցանմուշներ, որոնք առանց մուծումների կարող են օգտագործվել ճանաչողական եւ ուսուցողական նպատակներով:

Ըստ այդ առթիվ շրջանառության մեջ դրված մամլո հաղորդագրության՝ «Հայոց ցեղասպանության վկայություններ: Լուսանկարներ՝ կատարված կազմակերպողների, գերմանացի եւ ավստրո-հունգարացի դաշնակիցների կողմից» ընդհանուր խորագիրը կրող պլակատների, հավաքածուն ներառում է մեկ էջ ներածական, մեկ էջ մանրամասն ժամանակագրություն, մեկ էջ գունավոր տեղեկանքի քարտեզ եւ յոթ էջ պատմական լուսանկարներ իրենց բացատրություններով, հիմնված նախկինում ANI-ի հրատարակած Հայոց ցեղասպանության քարտեզի վրա, որտեղ մանրամասն ցույց են տրված ցեղասպանության երեք հիմնական ոլորտները՝ տեղահանություն, կոտորածներ եւ համակենտրոնացման ճամբարներ: Տես էջ 2

# Խոջալու. մի ահաբեկչության պատմություն

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

Ստեփանակերտի օդանավակայանի գործարկման թեմայով ադրբեջանական կողմից ամենաշրջանառված քարոզչահնարանքներից է, թե «հայերը փորձում են նախկինում Ադրբեջանի բյուջետային միջոցներով կառուցված եւ իրենց իսկ ձեռքով ավերված Խոջալուի օդանավակայանը ներկայացնել որպես նորակառույց»: Ինչ վերաբերում է Ադրբեջանի «բյուջետային միջոցներով» օդանավակայան կառուցելուն, ապա ԼՂԻՄ մարզխորհրդի գործկոմի այն տարիների նախագահ Մուշեղ Օհանջանյանը «Արցախ. հայրենի եզերք» հուշերի գրքում տալիս է դրա սպառիչ պատասխանը: Ստեփանակերտի օդանավակայանը կառուցվել է ինքնավար մարզի արտաբյուջետային միջոցների հաշվին:

Այժմ՝ հայերի կողմից «օդանավակայանը պայթեցնելու» մասին: Նախ, դա անտրամաբանական է: ԼՂՀ-ն չէր կարող նման խնդիր առաջադրել: Պատճառը պարզ է. Խոջալուի ռազմագործողության հիմնական նպատակը հենց միակ օդանավակայանը ապաշրջափակելն ու այդ կերպ արտաքին աշխարհի հետ կապ հաստատելն էր, քանի որ 1990թ. հունվարից Արցախը գտնվում էր պաշարման մեջ: Նման նպատակադրվածություն պետք է որ ունենար Ադրբեջանը՝ որպես ծայրահեղ քայլ այն դեպքում, եթե չհաջողվեր «պաշտպանել Խոջալուն»:

Բարեբախտաբար, այս ենթադրությունը հաստատող փաստեր գտնվում են: Այսպես, Ադրբեջանի դատախազության քննիչի հարցին, թե 1992թ. փետրվարի 8-ին տեղի ունեցած՝ Անվտանգության խորհրդի նիստի որոշման մեջ Խոջալուի մասին ոչինչ նշված չէ, Մութալիբովի կառավարությունում պետական քարտուղար Միթաթ Աբասովը պատասխանել է. «Ձեր նշած փաստաթուղթը Ախ նիստի արձանագրությունն է, որը հանձնարարական բնույթ ունի:

Տես էջ 3

# Վերաքննիչը բավարարեց «Ազգի» բողոքարկումը վարչական դատարանի դեմ

Մեր ընթերցողները հիշում են այն տագնապը, որը տարեվերջտարեսկզբին պատճառվեց «**Ազգին**» վարչական դատարանի անօրինական հանգամանքներում կայացրած վճռի հետեւանքով: Դեռեւս 2012 թ. հոկտեմբերի 10-ին ՀՀ վարչական դատարանը (դատավոր՝ Ա. Ղազարյան), բավարարելով ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի հարկային տեսչության ընդդեմ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ-ի՝ հօգուտ պետական բյուջեի 3.655.800 դրամ բռնագանձելու պահանջը, կարգադրել էր դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությանը բռնագանձել այդ գումարը: Վերջինս էլ արգելանք էր դրել տարբեր բանկերում թերթի ունեցած հաշիվների վրա, ինչի հետեւանքով «**Ազգը**» չկարողացավ լույս տեսնել 14 օր, բնականաբար կրելով նյութական զգալի վնասներ:

Անշուշտ, վիճարկելի չէր հարկային մարմնին թերթի ունեցած պարտքը: Սակայն վիճարկելի էին վարչական դատարանի որոշման կայացման հանգամանքները՝ դատարանը պատասխանող կողմին («Ազգ օրաթերթ» ՍՊԸ-ին) չէր ծանուցել դատական նիստի մասին, եւ վճիռը կայացրել էր նրա բացակայությամբ:

Բնականաբար, ինչպես հաղորդել ենք մեր թերթի 2013 թ. հունվարի 14-ի համարում, «Ազգ օրաթերթ» ՍՊԸ-ի բաժնետերերի խորհուրդը որոշեց վճարել պետբյուջեին թերթի ունեցած պարտքը եւ, միաժամանակ, վերաքննիչ վարչական դատարանում բողոքարկել վճիռը՝ պատշաճորեն ծանուցված չլինելու հիմքով: Որոշումը գործադրվեց անհապաղ՝ վճարվեց պետբյուջեին թերթի ունեցած պարտքը եւ բողոք ներկայացվեց վերաքննիչ դատարան: Բողոքարկման տրամաբանությունն այն էր, որ դատարանը անտեսել էր հայցորդի եւ պատասխանողի արդարադատության առջեւ հավասարության հիմնարար սկզբունքը: Խախտում՝ որը եթե դատարանը իրեն թույլ է տալիս 22 տարի գործող լրատվամիջոցի նկատմամբ, ապա կարելի է երեւակայել, թե նույն դատարանը ինչպես է վարվում շարքային քաղաքացու հետ:

Վերաքննիչ դատարանը, որտեղ «**Ազգի**» շահերը պաշտպանում էր հմուտ փաստաբան Անահիտ Սարդարյանը, 2013 թ. հունվարի 18-ին գումարված նիստում (նախագահող դատավոր՝ Արթուր Առաքելյան, դատավորներ՝ Աշոտ Աբովյան եւ Գալուստ Ղարիբյան) քննեց գործը եւ 2013 թ. մարտի 7-ին որոշեց բավարարել թերթի բողոքը, բեկանեց վարչական դատարանի վճիռը եւ վարչական գործն ուղարկեց վարչական դատարան՝ «ամբողջ ծավալով նոր քննության»:

Սպասենք նոր քննության արդյունքին: Խոստանում ենք լինել հետեւողական: Սա մեր խնդիրը չէ միայն:

ՏՆՕՐԵՆՈՒԹՅՈՒՆ

# 10 հազար դոլար 1 շնչին ընկնող ՀՆԱ Հայաստանում

## *Իրատեսակա՞ն, թե՞ անհասանելի ցուցանիշ 2025-ին*

Հրապարակվել է Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման հեռանկարային ծրագիրը, որն առնչվում է առաջիկա 13 տարիներին (2012-2025թթ.) մեր երկրին զարգացման գերակայություններին, նպատակներին, ինչպես նաեւ զարգացման հնարավոր խոչընդոտներին եւ սահմանափակումներին: Կառավարությունը վերանայել է նախորդ ծրագիրը, հաշվի առնելով 2008-2009-ի համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը եւ դրանով պայմանավորված նոր իրողությունները ինչպես համաշխարհային, այնպես էլ Հայաստանի տնտեսության մեջ: Նկատի ունենալով, որ ծրագիրը բավականին ծավալուն է եւ ընդգրկում է երկրի տնտեսության եւ սոցիալական ոլորտի բոլոր ճյուղերն ու ուղղությունները, տարբեր հրապարակումներով կանդրադառնանք առանձին ոլորտներին, ներկայացնելով դրանց վերաբերյալ մեր դիտարկումներն ու գնահատականները:

Բնականաբար, երկրում դրական զարգացումների կարեւոր նախապայմանը տնտեսական, այսինքն համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) աճի ցուցանիշն է: Այս առումով ի՞նչ է կանխատեսվում հեռանկարային զարգացման ծրագրում:

2003-2008 թթ. Հայաստանի տարեկան միջին տնտեսական աճը կազմել է 12,2 տոկոս, որը, սակայն, ընդհատվեց 2009-ին՝ ավելի քան 14 տոկոս տնտեսական անկմամբ: Դրանից հետո, 2010, 2011-ին Հայաստանը սկսեց դուրս գալ տնտեսական անկումից, իսկ անցյալ տարի տնտեսական աճը կազմեց 7 տոկոս: Առաջիկա տարիներին կառավարությունը նպատակադրել է տարեկան 6,3-6,5 տոկոս միջին տնտեսական աճի ցուցանիշ ապահովել: Դոլարային արտահայտությամբ դա նշանակում է, որ ներկայիս մոտ 10 մլրդ դոլար ՀՆԱ-ի դիմաց 2025-ին Հայաստանի ՀՆԱ-ն կկազմի մոտ 30 մլրդ դոլար: Ակնկալվում է 1 շնչին ընկնող ՀՆԱ-ն ներկայիս 3,4 հազար դոլարից, որ 2025-ին կհասնի 10 հազար դոլարի: Այսինքն, 13 տարվա ընթացքում ՀՆԱ-ի ընդհանուր, ինչպես նաեւ 1 շնչին ընկող ցուցանիշը կանխատեսվում է, որ կեռապատկվի:

Իսկ որքանո՞վ է իրատեսական կամ հավակնոտ 1 շնչին ընկնող ՀՆԱ-ի 13 տարի հետո 10 հազար դոլար ցուցանիշը: Տեսակետներ կան, որ դա իրատեսական չէ եւ ծրագրված ցուցանիշին հասնելը հնարավոր չի լինի այդ ժամկետում:

Խնդիրն այն է, որ ինչ-որ առումով տնտեսական բարձր աճ ապահովելը աստիճանաբար ավելի դժվար է դառնում՝ նկատի ունենալով տարեցտարի ավելացող բազան: Այսինքն, ավելի հեշտ է երկնիշ տնտեսական աճ արձանագրել տնտեսական խոր անկումից հետո, ինչպես եղավ 2000-ականներին, քան 6 կամ 7 տոկոս, երբ տնտեսություն արդեն կայացել է եւ հարկ է այն զարգացնել, հաշվի առնելով դեռեւս չօգտագործված հնարավորությունները, տնտեսության դիվերսիֆիկացման անհրաժեշտությունը: Այս առումով ՀՆԱ-ի ընդհանուր եւ 1 շնչին ընկնող ՀՆԱ-ի ցուցանիշի եռապատկումը դժվար իրագործելի է թվում: Սակայն, առավել հանգամանորեն դիտարկելու դեպքում, պարզ է դառնում, որ այդ նպատակը ոչ միայն հավակնոտ չէ, այլ նաեւ զգուշավոր իրատեսական է:




Համաձայն պաշտոնական վիճակագրական տվյալների, 2000-ի համեմատ 2007-ին Հայաստանի համախառն ներքին արդյունքի ցուցանիշը եռապատկվել է՝ 103 մլրդ դրամից հասնելով 315 մլրդ դրամի: Փաստորեն, 7 տարում ՀՆԱ եռապատկման փաստ արդեն ունենք: Նկատի ունենալով վերեւում նշված հանգամանքը, որ աստիճանաբար ավելի դժվար է դառնում բարձր տնտեսական աճ ապահովելը, արդեն 13 տարում նույն արդյունքին հասնելը կարող է հավանական լինել: Այստեղ հարկ է հաշվի նաեւ այն հանգամանքը, որ, ինչպես նշված է ծրագրում, տնտեսական աճի շարժիչ ուժը պետք է դառնա արտահանելի հատվածը, հիմնականում արդյունաբերության շնորհիվ եւ ծառայությունների ոլորտը որպես տնտեսական ակտիվությունը ապահովող ճյուղ: Այսինքն, տնտեսական զարգացման խթանները աստիճանաբար տեղափոխվելու են բարձր արտադրողականություն ունեցող ոլորտներ, ի տարբերություն այն բանի, որ 2000-ականներին տնտեսական աճի շարժիչ ուժը ոչ արտահանելի եւ ոչ արտադրական ճյուղ հանդիսացող շինարարությունն էր:

Մյուս կողմից, հարկ է փաստել նաեւ, որ 1 շնչին ընկնող 10 հազար դոլար ՀՆԱ ցուցանիշը, իրատեսական լինելով հանդերձ, այնքան էլ բարձր եւ հավակնոտ չէ: Այս ցուցանիշը, անշուշտ, ենթադրում է բարեկեցության նկատելի բարձրացում մեր երկրում, բայց, դրանով հանդերձ, շարունակելու ենք շատ հետ մնալ եվրոպական եւ զարգացած այլ երկրների բնակչությունների կենսամակարդակից:

Բնական է, որ մենք երազել անգամ չենք կարող Լյուքսեմբուրգի 1 շնչին ընկնող 104 հազար դոլար (ըստ Արժույթի միջազգային հիմնադրամի 2010-ի ցուցանիշների), ոչ էլ Նորվեգիայի՝ 84 հազար դոլար, Դանիայի՝ 55 հազար դոլար, Գերմանիայի եւ Ֆրանսիայի՝ 40 հազար դոլար եւ նման այլ երկրների ցուցանիշների մասին: Սակայն պետք է ձգտել գոնե 2025-ին հասնենք 2010-ին Չեխիայի՝ 1 շնչին ընկնող 18 հազար դոլար, Սլովակիայի՝ 16 հազար դոլար կամ Էստոնիայի 14 հազար դոլար ցուցանիշներին: Հետեւաբար, 10 հազար դոլար 1 շնչին ընկնող ՀՆԱ-ն չի կարելի համարել անհասանելի ցուցանիշ: Ավելին, հարկ է ձգտել ավելի բարձր ցուցանիշ ապահովելուն:

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

# Տաքսիստները բողոքում են Գյումրու փողոցների վիճակից

Երեկ Գյումրիում բողոքի ցույց էին կազմակերպել անհատական տաքսի մեքենաների վարորդները: Պատճառն այս անգամ ոչ թե դեղին կամ սպիտակ պետհամարանիշներն էին ու լիցենզավորման կարգի հետ կապված փոփոխությունները, այլ քաղաքի փողոցների ընդհանուր անմխիթար վիճակը: Վերջինս գնալով ավելի հաճախ լրջորեն խոչընդոտում է բնականոն երթեւեկությանն ու մեքենաների խափանման, ջարդվելու պատճառ դառնում, ստեղծում վթարային իրավիճակներ:

Գյումրիում եթե նախկինում փոսառատ ու անբարեկարգ էին երկրորդական փողոցները, ապա այժմ հիմնականում նման վիճակում են նաեւ կենտրոնական փողոցները: Ամեն տարի իրականացվող փոսալցումներն ու կարկատաններն ընդհանուր իրավիճակը չեն փոխում, իսկ պետական միջոցներով ոչ ծավալուն հիմնանորոգումներն էլ նպատակին բավարար չեն ծառայում: Անհատ տաքսիստները հարց են առաջ քաշում, թե ո՞ւր են գնում իրենցից գանձվող պետական վճարները, եթե փողոցների բարեկարգմանը անհրաժեշտ միջոցներ չեն հատկացվում: Իրենք այդ վճարներից բացի, որոնք կատարելուց ստիպված են հրաժարվել, հաճախ նաեւ հարկադրված են լինում մեքենայի նորոգման չնախատեսված ու իրենց եկամուտը գերազանցող ծախսեր անել:

Գյումրեցի վարորդների դժգոհությունն ու բողոքը տեղին են համարում նաեւ քաղաքապետարանում: Ըստ կոմունալ բաժնի պատասխանատուների, հենց երեկվանից քաղաքի որոշ փողոցներում սկսվել են փոսերի խճապատման աշխատանքներ, իսկ ընթացիկ նորոգման-ասֆալտապատման աշխատանքներ կսկսվեն ապրիլ ամսին, երբ եղանակային պայմանները թույլ տան: Իսկ խնդրի արմատական լուծման համար, անշուշտ, լուրջ ծրագիր ու միջոցներ են անհրաժեշտ:

**Գ. Մ.**

**ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԱՍՈՒԼԻՍԻՑ**

# Սերժը՝ Րաֆֆուն, եւ ընդհակառակը

*1-ին էջից*

**Այդ բոլորից հետո Ր. Հովհաննիսյանն առաջարկել է ընտրակեղծարարներին պատժել, ու հետո էլ համապետական մի այլ միջոցառում: Ու նախագահ Սարգսյանի խոսքով՝ փոխադարձորեն պայմանավորվել են մտքերը հանձնել թղթին՝ առաջարկություն անել, միմյանց փոխանցել: Նախագահը նրան երեք տարբերակ է առաջարկել՝ շարունակել կուշտ պահանջները, դառնալ հիմնական ընդդիմություն եւ ստիպել իշխանությանն աշխատել, կամ էլ ներգրավվել իշխանության մեջ: Վերջին որոշումը կայացնելուց հետո միայն մանրամասները պետք է քննարկվեին:**

**Նախագահ Սարգսյանն ասել է նաեւ, որ չի պատրաստվում Ազատության հրապարակ գնալ: Նա կասկածի տակ է դրել նաեւ հանրահավաքների մարդաշատությունը՝ նշելով , որ քաղաքացիների 0,1 տոկոսն է մասնակցում դրանց, եւ այդ դեպքում կոռեկտ չէ «ժողովուրդ» բառի օգտագործումը. «Իմ խորին համոզմամբ, Րաֆֆի Հովհաննիսյանը հացադուլ հայտարարելով գործընթացները դուրս դրեց քաղաքական պրոցեսից: Ես գնամ ի՞նչ խոսեմ Րաֆֆի Հովհաննիսյանի հետ: Ինքս ինձ եմ հարցնում՝ գնամ ինչի՞ մասին բանակցեմ. աշխարհի վրա դառնացած եւ արդեն 8 օրը լրացած սոված մարդու հետ: Ինչպես Դուք եք ասում՝ հնարավոր է նաեւ առողջական վիճակը շատ գերազանց չլինի: Որովհետեւ բանակցություններ՝ չի նշանակում հաճոյախոսություններ փոխանակել, չէ՞: Չեմ տեսնում դրա արդյունքը, չեմ տեսնում դրա իմաստը: Եթե ես գնալու լինեի այնտեղ, միայն պետք է գնայի մի նպատակով՝ մեկ անգամ եւս հորդորելու, խնդրելու Րաֆֆի Հովհաննիսյանին՝ հացադուլ չանել, ընտրել պայքարի (դիտավորյալ եմ այստեղ բաց թողնում քաղաքական բառը) այլ ձեւեր: Ես դա հիմա եմ անում՝ Րաֆֆի՛ Հովհաննիսյան, հորդորում եմ դադարեցրեք հացադուլը, ես Ձեզ աղաչում եմ, խնդրում եմ: Մի կարեւոր շատ էական հանգամանք էլ կա. ես չգիտեմ, թե ի՞նչ պայմանով է Րաֆֆի Հովհաննիսյանը հացադուլ հայտարարել, կարո՞ղ եք ասել, հուշեք ինձ: Դուք ինֆորմացիայի տիրապետող մարդ եք, հուշեք՝ ի՞նչ պայման է դրել Րաֆֆի Հովհաննիսյանը», ասել է նախագահ Սարգսյանը:**

**Նա նաեւ ասել է, թե գրավոր առաջարկ է ուղարկել Ր. Հովհաննիսյանին (սահմանադրական հանրաքվեի եւ այն կազմակերպող հանձնաժողովի վերաբերյալ) եւ պատասխան է ստացել՝ խաչի տեսքով (լրագրողի ճշտմամբ՝ խաչ քաշած):**

**Այս եւ մի շարք այլ մտքեր է ուղղել նախագահ Սարգսյանն իր հարցազրույցում Րաֆֆի Հովհաննիսյանին, որին երեկ իր ասուլիսով պատասխանեց Րաֆֆի Հովհաննիսյանը՝ նշելով, որ դրանք չեն համապատասխանում իրականությանը ու որ դրա մեջ գուցե մեղավոր է նախագահի, իր խոսքով, «վախկոտ շրջապատը»: Նա ասաց, թե չի ասել՝ չի հաղթել, ասել է համատարած կեղծիքներ են եղել, թող լինի երկրորդ փուլ լինի: Սխալ է նաեւ, որ նախագահի առաջարկած երրորդ ճանապարհը քննարկվել է՝ ո՛չ նախագահ Սարգսյանը, ո՛չ ինքը չեն քննարկել Րաֆֆու մասնակցությունը կառավարության կազմում: Իսկ որ իրեն փաստաթուղթ է ուղարկվել առաջարկներով, ինքը խաչ է քաշել դրանց վրա, Ր. Հովհաննիսյանը նշեց, թե նախագահի աշխատակազմի ղեկավարի զանգից հետո մի քանի օր հարցի գնալ-գալուց հետո հանգուցալուծում չի եղել, Հովիկ Աբրահամյանի այցի հաջորդ օրը, մարտի 16-ին Արմեն Մարտիրոսյանին Հովիկ Աբրահամյանի կողմից է ուղարկվել է մի ծրար, Ազգային ժողովի հասցեով, մարտի 9-ի թվականով, որտեղ առաջարկ է եղել երկու-երեք տարի հետո լինելիք ինչ-որ սահմանադրական հանձնաժողովի վերաբերյալ Րաֆֆու ու Սերժի միջեւ հուշագիր ստորագրելու մասին: Իսկ դա արդեն մերժված է եղել «Ժառանգություն» խմբակցության կողմից:**

**Եվ Րաֆֆին, դա ծաղր համարելով, ոչ թե խաչ է քաշել, այլ օղակով նշել հասցեն, եւ ամսաթիվը եւ էլի փակ ծրարով եւ իր ստորագրությամբ հետ ուղարկել: Եթե նախագահ Սարգսյանին փաստաթուղթ կամ առաջարկներ են պետք Րաֆֆի Հովհաննիսյանից՝ նա դրանք կանի հրապարակավ՝ ուրբաթօրյա հանրահավաքում: Նա նշել է, որ մինչեւ ապրիլի 9 եթե չլինի ինքնաբացարկ, ապրիլի 9-ին կորոշեն, թե ինչ է ներկայացնում իրենից Նոր Հայաստանը, իսկ այս ուրբաթ իր առաջարկները վերաբերելու են «աննախադեպ, համազգային» խնդրի հանգուցալուծմանը՝ իր վերջին տեսակետներն է ներկայացնելու հրապարակավ: Ու, այնուամենայնիվ, Ր. Հովհաննիսյանն այսքանից հետո էլ պատրաստ է հանդիպել նախագահ Սարգսյանի հետ, եթե առաջարկ լինի, եթե պիտի ելք որոնվի իրավիճակից, բայց այսուհետեւ ամեն ինչ պետք է լինի հրապարակավ: Նա ասում էր, որ բոլոր իր առաջարկները եթե մերժվում են, եւ սահմանադրական հանրաքվեի ինչ-որ հանձնաժողով ղեկավարելու առաջարկ է արվում մի երեք տարի հետո, դա առանց իրեն էլ, միայն որակյալ իրավաբաններով կարելի է անել, բայց դա կապել ժողովրդից գողացված ձայների հետ՝ ծաղր է:**

**Հ. Գ. Նախագահ Սարգսյանի մեծածավալ հարցազրույցի այլ մանրամասները լրագրային տարբերակով փոխանցելն անհնար է:**

# Տասը թվայնացված...

*1-ին էջից*

**Հայոց ցեղասպանության վերաբերյալ լուսանկարներն առհասարակ քիչ են, որովհետեւ արգելել էին եւ հետեւում էին, որ լուսանկարչական ապարատներ ունեցողները չմոտենան դեպքերի տեղանքներին:**

**Այդուհանդերձ, գերմանացի քաղաքացիներ եւ զինվորական պաշտոնյաներ, արհամարհելով արգելքը, գաղտնորեն լուսանկարել են վայրագությունները: Այդ խիզախ մարդկանց թվին են պատկանում Հելմուտ ֆոն Մուքեն (Դեր Զորում), Վիկտոր Պիշմանը (Ուռհայում), Մաքս Էրվին ֆոն Շոյբներ-Ռիխտերը (փոխհյուպատոս Էրզրումում) եւ Արմին Վեգները (Հալեպում):**

**Այդ լուսանկարները երկար ուսումնասիրություններից հետո ի մի է հավաքել դոկտ. Հիլմար Կայզերը:**

**Հայոց ցեղասպանության եւ մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ նյութերի իրազեկման շրջանակներում «ANI»-ն եւ «AGMA»-ն խորհուրդ են տալիս նաեւ օգտագործել Սամուել Թոթենի եւ Ուիլյամ Պարսոնզի «Ցեղասպանություն դարեր: Էսսեներ եւ ականատեսի վկայություններ» հատորը, ինչպես նաեւ «ANI»-ի էլ. հասցեն (an:@agmm.org եւ «AAA»-ի պատրաստած «Մ. Նահանգների տեղեկագրերը Հայոց ցեղասպանության մասին»: Ամերիկայի պատմության հպարտ էջը» փաստագրական ամփոփագիրը:** Հ. Ծ.

Անցուդարձ

# Ասոցացման համաձայնագրի բանակցությունները կարող են ավարտվել մինչեւ նոյեմբեր



Հայաստան-Եվրամիություն ասոցացման համաձայնագրի երեկ մեկնարկած բանակցությունների 12-րդ լիագումար նիստն այսօր եւս կշարունակվի՝ անդրադառնալու Ասոցացման համաձայնագրի շրջանակներում քննարկվող հերթական հարցերին:

Երեկ Հայաստանի արտգործնախարարությունում մեկնարկած բանակցությունների 12-րդ լիագումար նիստը ելույթով բացել է նախարար **Էդվարդ Նալբանդյանը,** որին հետեւել է աշխատանքային նիստ, որ հայկական կողմից վարել է Հայաստանի արտաքին գործերի նախարարի տեղակալ, գլխավոր բանակցող **Զոհրաբ Մնացականյանը**:

Մինչ այդ, ԱԳՆ հաղորդագրության համաձայն, արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանն ընդունել էր Հայաստան-Եվրոպական միություն Ասոցացման համաձայնագրի բանակցությունների եվրոպական կողմի գլխավոր բանակցող, ԵՄ եվրոպական արտաքին գործերի ծառայության Արեւելյան Եվրոպայի տնօրեն Գունար Վիգանդի գլխավորած պատվիրակությանը, որը Հայաստան էր ժամանել բանակցությունների 12-րդ լիագումար նիստին մասնակցելու:

Նալբանդյանը հանդիպմանը նշել էր, որ 2010թ. հուլիսից մեկնարկած Ասոցացման համաձայնագրի բանակցությունները երկուստեք ջանքերի շնորհիվ արդեն մտնում են եզրափակիչ փուլին: Արդյունավետ ընթանում են նաեւ 2012թ. հունիսից մեկնարկած Խոր եւ համապարփակ ազատ առեւտրի գոտու վերաբերյալ բանակցությունները:

Նախարար Նալբանդյանի խոսքերով, Հայաստանի իշխանությունները, հանրապետության նախագահի ղեկավարությամբ, ձեռնամուխ են եղել լայնածավալ բարեփոխումների իրականացմանը՝ ժողովրդավարական հաստատությունները եւ օրենքի գերակայությունը ամրապնդելու, մարդու իրավունքները եւ հիմնարար ազատությունները պաշտպանելու, ընտրական գործընթացները եւ համապատասխան օրենսդրությունը բարելավելու եւ քաղաքացիական հասարակության դերն ամրապնդելու նպատակով, եւ այս ջանքերը պատշաճ կերպով ճանաչվել են, եւ Եվրոպական միությունը լրացուցիչ ֆինանսական հատկացումներ է նախատեսել Հայաստանի համար՝ «ավելին ավելիի դիմաց» սկզբունքին համաձայն:

Հանդիպմանը շեշտվել է, որ կողմերի ընդհանուր նպատակն է մինչեւ 2013թ. նոյեմբերին կայանալիք Վիլնյուսի գագաթաժողովն ավարտին հասցնել Հայաստան-ԵՄ Ասոցացման համաձայնագրի, ներառյալ Խոր եւ համապարփակ ազատ առեւտրի գոտու ստեղծման բանակցությունները:

Նախարար Նալբանդյանը եւ ԵՄ գլխավոր բանակցող **Վիգանդը** կարեւորել են Հայաստանի եւ Եվրամիության միջեւ քաղաքացիների շարժունակությունը եւ շփումները խրախուսելու ուղղությամբ գրանցված զգալի առաջընթացը, մասնավորապես, անցյալ տարի դեկտեմբերին Բրյուսելում ստորագրված ԵՄ երկրներ մուտքի արտոնագրերի տրամադրման դյուրացման վերաբերյալ համաձայնագիրը, եւ հույս հայտնվեց, որ այն շուտով կվավերացվի եւ կմտնի ուժի մեջ:

Անդրադարձ է կատարվել նաեւ Ասոցացման օրակարգի ձեւավորման քննարկումներին, որը փոխարինելու է Եվրոպական հարեւանության քաղաքականության գործողությունների ծրագրին:

Վ. Պ.

ՍՈՑԱՊ ՆԱԽԿԻՆ ՊԵՏԻ ԳՈՐԾՈՎ

# Դատարանը մերժեց 296 միլիոն դրամի գրավը

Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում երեկ շարունակվեց ՀՀ աշխատանքի եւ սոցիալական ապահովության պետական ծառայության նախկին պետ Վազգեն Խաչիկյանի գործով դատավարությունը: Գործով անցնող ամբաստանյալները 13-ն են՝ Վազգեն Խաչիկյան, Հովհաննես Գրիգորյան, Վահագն Խաչատրյան, Բագրատ Մուրադյան, Արմեն Խաչատրյան, Սամվել Էլբակյան, Հովհաննես Հովհաննիսյան, Սարգիս Սարգսյան, Արթուր Սուքիասյան, Համլետ Մարտիրոսյան, Հրանուշ Դանիելյան, Աշոտ Աբրահամյան: Ամբաստանյալ Հովհաննես Գրիգորյանի փաստաբան **Արա Զաքարյանի** միջնորդությամբ առաջարկվում էր պաշտպանյալի խափանման միջոց կալանքը փոխարինել գրավով: Փաստաբանն առաջարկեց 296 միլիոն դրամ, որից 10 միլիոնը՝ գումարի տեսքով, մնացյալը՝ անշարժ գույք: «Պաշտպանական կողմը խոստանում է, որ Հովհաննես Գրիգորյանը չի խուսափի դատաքննությունից եւ չի խոչընդոտի դատաքննությանը», հավաստիացրեց փաստաբանը: Փաստաբանի այդ միջնորդության հիմնավորմանը չհավատաց մեղադրող կողմը: Դատախազ **Ենոքյանը** վստահ չէր, որ Գրիգորյանը չի թաքնվի դատաքննությունից կամ ազդեցություն չի գործադրի տուժողների վրա: Գրիգորյանի գույքի վրա արգելանք է դրված: Մեղադրող կողմի հայտարարությանն ի պատասխան՝ Զաքարյանն ասաց, որ գրավի տակ դրվող անշարժ գույքի վրա կալանք դրված չէ: «Դրանք Հովհաննես Գրիգորյանի հարազատների ու բարեկամների բնակարաններն են ու նրանց սեփականությունն են, եւ նրանք գիտեն, որ եթե իմ պաշտպանյալը խախտի պայմանները, ապա դրանք կանցնեն պետության տնօրինման տակ»: Նախագահող դատավոր **Մխիթար Պապոյանը** մերժեց միջնորդությունը:




Հ. Հ.

ՏԵՍԱԿԵՏ

# Փակ սահմանն ավելի անառիկ է

**Փոքր հասակում մեկ-երկու անգամ ականատես եմ եղել պապիս ու հորս վեճին: Պապս հաճախ էր կրկնում. «Ինչ առվով ջուր է գնացել, էլի պիտի գնա»: Այսինքն՝ ով ինչ տեսել է, նորից պիտի տեսնի: Ամեն անգամ հայրս պապիս հանդիմանում էր, որ դա լավ ասացվածք չէ. մարդիկ կան՝ ծանր կյանք են ապրել, ուրեմն էլի՞ պիտի տեսնեն: Պապս անդրդվելի էր իր կարծիքում, իսկ ես մտածում էի. «Դե, ժողովրդական խոսք է, պապս էլ միայն լավ առիթների ժամանակ է կրկնում, ի՞նչ կա որ»:**

**Տասնամյակներ են անցել, ես այս պատմությունը նույնիսկ մոռացել էի: Ու սիրիահայերի այս պատուհասի ժամանակ այդ ասացվածքը ես նորից վերհիշեցի: Մերձավոր Արեւելքում հրաշալի հայկական գաղթօջախներ ունեինք. Լիբանան, Սիրիա, Եգիպտոս, Իրաք...**

**1915 թվականի եղեռնից մազապուրծ հայերը Դեր Զորի անապատներով դեգերելով հասել էին Հալեպ, Դամասկոս, Բեյրութ, Բաղդադ... Եվ ամեն տեղ մի փոքրիկ Հայաստան ստեղծել. եկեղեցի ու դպրոց էին կառուցել՝ աշխարհին ասելով, որ թուրքական յաթաղանից հրաշքով փրկված հայը տեսեք, թե ինչ սխրանքների է ընդունակ: Այս ամենի հետ մեկտեղ նրանք առաջամարտիկ էին թե՛ Հայ դատի պաշտպանման եւ թե՛ ազգապահպանման հարցերում:**

**Հիմա մտածում եմ, որ ժամանակին Բեյրութում, իսկ այժմ Հալեպում ու Դամասկոսում տեղի ունեցող եղբայրասպան այս պատերազմները նաեւ թուրքական յաթաղանի խնամքով նախապատրաստված եւ հրահրած ծրագրով են...**

**Եղեռնի 100-ամյակի նախօրեին սիրիահայ հզոր ու բարգավաճող գաղթօջախը Մերձավոր Արեւելքում մի «զանգ» էր, որի ղողանջները տարեցտարի աշխարհով մեկ ավելի զորեղ էին հնչում՝ ազդարարելով քսաներորդ դարի առաջին ցեղասպանությունը: Այս ամենը Թուրքիան չէր կարող հանդուրժել եւ հարմար պահի դեպքում պիտի որ իր սեւ գործն աներ: Հիմա մեզանից ոմանք, պատմական անցյալից ու ներկայից դասեր չքաղելով, գոնե ժամանակավորապես, սահման բացելու «աղերսանք» են հնչեցնում, որ սիրիահայերը՝ Եղեռնից հրաշքով փրկվածների զավակներն ու թոռները, ախուվախ անելով, իրենց կորուսյալ աշխարհով Հայաստան հասնեն: Ինչպիսի «մարդասիրություն» եղեռնագործի կողմից: Եթե այդպես է, ոչ թե սահման բացելու կոչ պետք է հնչեցվի, այլ՝ իրենց պապենական հողում բնակություն հաստատելու, իսկ թե ինչպե՞ս, դա այլ խնդիր է:**

**Ի դեպ, չբացված սահմանն ավելի անառիկ է լինում...**

ՌՈԲԵՐՏ ՄԱԹՈՍՅԱՆ
«Կինո» ամսագրի գլխավոր խմբագիր

# Խոջալու. մի ահաբեկչության պատմություն

*1-ին էջից*

Կոնկրետ Խոջալուի մասով որոշումն այսպիսին էր՝ ճեղքել շրջափակումը եւ ապահովել «քաղաքի» (չակերտները մերն են- Վ. Ա.) պաշտպանությունը, իսկ եթե դա ինչ-ինչ պատճառներով հնարավոր չլինի, ապա օդային ճանապարհով կազմակերպել բնակչության էվակուացիան, որից հետո՝ պայթեցնել օդանավակայանը եւ թռիչքուղին» (տես՝ http://www.erevangala500.com/booke//pdf/1323993822.pdf):

Նույն տեղում ծանոթանում ենք նաեւ Ի. Ռուստամովի ցուցմունքներին: Ըստ այդմ, «փետրվարի 15-ին ՆԳՆ ՕՄՕՆ-ի (հատուկ նշանակության ջոկատների- Վ. Ա.) հրամանատար Ռովշան Ջավադովի հետ միասին» նա ներկայացել է ներքին գործերի նախարար Քերիմովին: Վերջինս հետաքրքրվել է՝ ճի՞շտ է, որ Ռուստամովը «մասնագիտությամբ պայթեցնող դիվերսանտ է»: Ստանալով դրական պատասխան, նախարարը հետաքրքրվել է. «Կարո՞ղ ես պայթեցնել Խոջալուի օդանավակայանի թռիչքուղին»: Ռուստամովը դարձյալ դրական է պատասխանել: Այնուհետեւ Քերիմովը հարցրել է, թե «դրա համար ի՞նչ միջոցներ են պետք»: Ռուստամովը մանրամասնորեն ներկայացրել է հաշվարկը՝ տրոտիլ, էլեկտրապայթուցիչներ, էլեկտրաքուղ՝ նշելով անհրաժեշտ քանակությունը:

Նույն օրը Ռուստամովն ստացել է անհրաժեշտ նյութերն ու սարքավորումները, բացառությամբ էլեկտրաքուղի: Փետրվարի 16-ին նա ուղղաթիռով հասել է Աղդամ, որտեղ հարկ եղած քանակի՝ 500 մ էլեկտրաքուղ ստացել է Կասում Քերիմովից՝ «Քարհանք Կասում» մականվանյալ: Վերջինս Շահբուլաղի քարհանքի երկարամյա տնօրենն էր, հայտնի «օլիգարխիկ» հեղինակություն Աղդամում եւ շրջակայքում: Այս պահից սկսած Ռուստամովի ցուցմունքները խեղաթյուրված են: Նա խոսում է, որ իրեն «Խոջալու հասնելու համար ուղղաթիռ չեն տրամադրել եւ, սպասելով մինչեւ փետրվարի 24-ը, հարկադրված վերադարձել է Բաքու, ներկայացել ՆԳ նախարար Քերիմովին» եւ այլն, եւ այլն:

Մեր ուշադրությունը գրավեց փետրվարի 16 ամսաթիվը, այն օրը, երբ Ռուստամովը Բաքվից «ուղղաթիռով հասել է Աղդամ»: Աղդամից Խոջալու հեռավորությունը հազիվ 14 կմ է: Եթե խնդիր դրված լիներ, որ Ռուստամովը վտանգավոր բեռով Խոջալու պիտի մուտք գործեր օդից, ապա ի՞նչ իմաստ կունենար Աղդամում վայրէջքը, «օրեր շարունակ ուղղաթիռի սպասելը»: Ուղղաթիռը չէ՞ր կարող միանգամից իջնել Խոջալուում: Ինչո՞վ է նշանավոր դառնում փետրվարի 16-ը՝ Ռուստամովի Աղդամ հասնելու օրը: Ադրբեջանցի ուսումնասիրող Մամեդ Վելիմամեդովը, հղում անելով ադրբեջանական ԱԱ նախարարության «միանգամայն վստահելի աղբյուրներին», գրում է, որ «փետրվարի 16-ին Խոջալու- Քյաթուկ- Շելլի երթուղով Աղդամ են հասել երկու խոջալուցի՝ Օրուջեւ եւ Մուսաեւ ազգանունով»:

Կրկնենք, դա նույն օրն է, երբ Բաքվից Աղդամ է հասել դիվերսանտ Ռուստամովը՝ հատուկ նշանակության բեռով: Պատահականությո՞ւն է, որ այդ օրն Աղդամ են մտել նաեւ Օրուջեւը եւ Մուսաեւը, որոնց «խոջալուցի լինելը» խիստ կասկածելի է: Իսկ եթե նրանք Խոջալուում տեղակայված՝ Ադրբեջանի ՆԳՆ ՕՄՕՆ-ի զինծառայողնե՞ր էին: Հետեւենք Վելիմամեդովին: Նրա խոսքով, «Օրուջեւը եւ Մուսաեւը, որոնց Աղդամում միացել է եւս երեք հոգի, փետրվարի 18-ին վերադարձել են Խոջալու՝ իրենց հետ տանելով ուտելիք եւ 3 000 փամփուշտ»: Շրջափակված Խոջալուից Աղդամ կարող էր հասնել եւ, մանավանդ, վերադառնալ հատուկ պատրաստություն անցած խումբը միայն: Սա կասկածից դուրս է, եթե նկատի ենք ունենում, որ Օրուջեւի եւ Մուսաեւի ճանապարհը դեպի Աղդամ, 5 հոգանոց բեռնավորված խմբի հետադարձ երթուղին անցնում էր ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերի Ասկերանի ուղղության դիրքերին շատ մոտ:

Համադրելով Ռուստամովի հատուկ հանձնարարությամբ եւ «խոջալուցիների» նույն օրն Աղդամում գտնվելու, ապա «եւս 3 հոգու հետ 3 000 փամփուշտով Խոջալու վերադառնալու» փաստերը, միանգամայն հնարավոր է դառնում պնդել, որ այդ խումբը փետրվարի 18-ին Խոջալու է հասցրել օդանավակայանի եւ թռիչքուղու պայթեցման համար նախատեսված հատուկ նշանակության բեռը: Ռուստամովը նրանց հե՞տ է եղել, թե՞ ոչ, արդեն կարեւոր չէ: Թեեւ չի բացառվում, որ նա կարող էր մուտք գործել Խոջալու, կատարել դիվերսանտի իր մասնագիտական գործը եւ «սեւ աշխատանքը» թողնելով տեղական ուժերին, նույն ճանապարհով վերադառնալ Աղդամ:

Խոջալուի «զինվորական պարետ» Ալիֆ Հաջիեւի, որպես Ադրբեջանի ազգային հերոսի, պաշտոնական կենսագրականում գրված է, որ «նահանջից առաջ հասցրել է պայթեցնել օդանավակայանի դիսպետչերական կետը, որպեսզի կարեւոր նշանակության փաստաթղթերը չընկնեն հակառակորդի ձեռքը»: Խոջալուի մասին ադրբեջանական աղբյուրները միաձայն խոսում են, որ «առաջինը հրդեհվել են օդանավակայանին մոտ տները, որն էլ խուճապի պատճառ է դարձել»: Ալիֆ Հաջիեւը, չունենալով մասնագիտական պատրաստվածություն, հնարավոր է, ինչ-որ բան այնպես չի արել, ինչպես նախատեսել էր դիվերսանտ Ռուստամովը: Մի բան ակնհայտ է. Ստեփանակերտի օդանավակայանի պայթեցման ծրագիր ունեցել եւ այն հիմնական մասով իրականացրել է Ադրբեջանը:

## Մարմնակրթություն

# Առողջ սերունդ դաստիարակելու եւ ռազմական ամուր թիկունք ունենալու ծրագիր՝ առաջարկում է մասնագետը

Հայաստանի Հանրապետության առաջ բացվում են այն ճանապարհները, որոնք տանում են դեպի ազգային վերածնունդ: Իսկ վերածննդի ճանապարհին ամենակարեւոր գործոններից են ազգային դպրոցը, հայեցի կրթությունն ու դաստիարակությունը: Իսկ ազգային դպրոցի կարեւորագույն խնդիրներից մեկն էլ՝ ունենալ մատաղ սերնդի ֆիզիկական դաստիարակության ամուր համակարգ:

Ինչպես հանրակրթական, այնպես էլ մանկապատանեկան մարզադպրոցները կոչված են նպաստելու մատաղ սերնդի կրթությանը եւ համակողմանի զարգացմանը, հանրակրթական եւ մանկապատանեկան մարզադպրոցների առջեւ դրված խնդիրները սերտորեն շաղկապված են: Բնականաբար, ոչ մի կետ չի հիմնավորվում այն տեսակետը, թե այդ խնդիրները կարող են առանձին-առանձին արդյունավետ աշխատել մեկ համակարգից դուրս: Բացի դրանից՝ մանկապատանեկան մարզադպրոցները հիմնականում գործել են հանրակրթական դպրոցների մարզաբազաներում, մարզիչների մեծ մասն էլ նույն կրթահաստատությունների ֆիզկուլտուրայի ուսուցիչներն էին:

1990-ական թվականներին ՀՀ լուսավորության մինիստրության ենթակայության մարզադպրոցների թիվը հասնում էր 120-ի, 22 մարզադպրոց ուներ Երեւանի քաղաքային կրթության վարչությունը՝ ըստ վարչական շրջանների: Այս համակարգը վաղուց արդարացրել էր իր գոյությունը: Վկան՝ դրանց մասսայականությունը, ՄՊՄԴ-ներում ընդգրկված սաների թիվը, խմբերի եւ բաժանմունքների կայունությունը, որոնց հետ աշխատում էին ֆիզկուլտուրայի վաստակաշատ մեծ թվով ուսուցիչներ եւ ճանաչված մարզիչներ: Հարկ է նշել այդ տարիներին մեր հանրապետության մարզիկների վստահ մրցելույթներն ու մասնակցությունը դպրոցականների համամիութենական սպարտակիադաներում ու միջազգային մրցաշարերում: Հնարավորություններ էին ընձեռված բոլոր մարզադպրոցներին՝ կազմակերպելու ուսումնամարզական հավաքներ եւ մրցաշարեր ինչպես հանրապետությունում, այնպես էլ հանրապետությունից դուրս: Վիճակագրական թվերով կարող եմ փաստել, թե ինչքան մեծ կորուստ է կրել մանկապատանեկան մարզադպրոցների համակարգը: Այս իրողությունը եւս խորհելու առիթ է տալիս, ստիպում մտածել մեզանում շատ բան վերակառուցելու մասին: Հանրապետությունում ստեղծված տնտեսական վիճակը, արտագաղթը, տարածաշրջանային լարվածությունը եւ հակամարտությունները պարտավորեցնում են բոլոր շահախնդիր կազմակերպություններին՝ տուրք չտալ տարակարծություններին, վճռական գործողություններ ձեռնարկել ֆիզիկական դաստիարակության ազգային համակարգ ստեղծելու եւ նոր բարեփոխումներ կատարելու համար:

Այս հարցում օրինակ պետք է ծառայի զարգացած մի շարք երկրների փորձը, որոնցում ֆիզիկական դաստիարակության ազգային համակարգը շատ բանով վճռական դեր է խաղում տնտեսության զարգացման, քաղաքական իրավիճակի կայունացման եւ այլ խնդիրների կարգավորման գործում:

Հրադադարի եւ պատերազմական դրության մեջ հայտնված պետություններում էլ, ինչպիսին այժմ մենք ենք, որպես կանոն, ժամանակի թելադրանքով փոփոխություններ են կատարվում ֆիզիկական դաստիարակության համակարգում, գտնում են աշխատանքների կազմակերպման այնպիսի ձեւեր եւ մեթոդներ, որոնք նպատակաուղղվում են պատանիների եւ երիտասարդների ռազմամարզական կրթությանը, վաղ հասակից զարգացնում ուժը, դիմացկունությունը, կամային հատկանիշները եւ այլն: Գաղտնիք չէ, որ այս գործում վճռական դեր կարող են ունենալ հանրակրթական դպրոցներն ու մարզադպրոցները:

Ֆիզիկական դաստիարակության եւ սպորտի «խորհրդային դպրոցի» առաջավոր փորձը ընդօրինակել են Եվրոպայի մի շարք զարգացած երկրներ: Հանրակրթական դպրոցներում նախատեսվում էր աշակերտների ընդգրկվածությունը արտադասարանական մարզական խմբակներում դպրոցի սովորողների թվի 30 տոկոսի չափով: Այդ աշխատանքները ղեկավարելու համար ֆիզկուլտուրայի ուսուցիչների համար սահմանված էր լրացուցիչ վարձատրություն՝ ըստ դասարանների քանակի՝ 1/4, 1,2 եւ 1 դրույքաչափերով: Խորհրդային դպրոցի փլուզումից հետո շատ բան կորցրեց նաեւ մեր հանրապետության ֆիզիկական դաստիարակության համակարգը: Լուծարվեցին մարզական շատ կազմակերպություններ, ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի քաղաքային եւ շրջանային կոմիտեներ, ուսումնամեթոդական կաբինետներ, գործից ազատվեցին քաղաքային եւ շրջանային ժողկրթբաժինների, գործարանների, արտադրամասերի, ֆաբրիկաների, կոլտնտեսությունների եւ սովխոզների ֆիզկուլտուրայի հրահանգիչներ եւ մեթոդիստներ:

Ուրախալի է, որ երկար սպասումներից հետո Երեւանի քաղաքապետարանը շատ կարեւոր քայլ կատարեց՝ իր ենթակայության ներքո բացելով «ՀՈԱԿ Սպորտ կոմիտե» մարզական կազմակերպությունը:

Կարծում եմ, վերոգրյալ լուծարված մարզական բոլոր հիմնարկների արժանավոր փոխարինողը կարող է դառնալ «ՀՈԱԿ սպորտ կոմիտեն»՝ ընդլայնելով նրա գործունեության շրջանակները: Հարկավոր է վերանայել ու վերամշակել նրա կանոնադրությունը: «ՀՈԱԿ սպորտ կոմիտեում» պետք է ստեղծվեն այնպիսի մասնագիտացված բաժիններ, որոնք նպատակաուղղված լինեն ինչպես ազգաբնակչությանը, այնպես էլ դպրոցականների հետ տարվող ֆիզիկական դաստիարակության աշխատանքների բարելավմանը եւ իրագործմանը: «ՀՈԱԿ սպորտ կոմիտեի» կազմում կարող է ստեղծվել ֆիզիկական դաստիարակության ուսումնամեթոդական կենտրոն, որը կիրագործի իր կանոնադրությամբ նախատեսված առաքելությունները:

Մեր օրերում ֆիզկուլտուրայի ուսուցիչները եւ մարզիչները ուշադրությունից դուրս են մնացել, նրանք մասնագիտական եւ բարոյական օժանդակության կարիք ունեն: Դպրոցների շատ տնօրեններ ֆիզկուլտուրայի առարկայի դրվածքի բարելավման ուղղությամբ գրեթե ոչինչ չեն անում, անտեսվում են ֆիզկուլտուրայի դասերը եւ ֆիզկուլտուրայի ուսուցիչների աշխատանքները: Նախկինում Երեւանի քաղաքապետարանի կրթության վարչությունն իր լիազորությունների շրջանակներում իր ենթակայության 203 կրթական հաստատություններում ներդպրոցական վերահսկողություն էր իրականացնում կամ համընդհանուր ուսումնասիրություններ էր անցկացնում դպրոցներում, որտեղ ուշադրությունից դուրս չէր մնում ֆիզկուլտուրայի եւ ՆԶՊ-ի դրվածքի ուսումնասիրումը:

Վերադաս կազմակերպությունների, հատկապես կրթության պետական տեսչության կատարած դպրոցների ուսումնասիրություններում, անտեսվում են ֆիզկուլտուրան եւ ՆԶՊ առարկաները: Ֆիզկուլտուրայի ուսուցիչների ձայնը եւ խնդրանքը «վերեւներին» չեն հասնում, որովհետեւ չկան այն մարզական հաստատությունները, որոնց հետ նախկինում ֆիզկուլտուրայի ուսուցիչները կապի մեջ էին: Դպրոցների տնօրենները հոգ չեն տանում, որ դպրոցն ունենա ֆիզկուլտուրայի առարկայական չափորոշիչի եւ պետական ծրագրի ու նրա բաժիններին համապատասխան պահանջվող մարզագույք: Ուսուցիչը ստիպված պարապում է այն, ինչը նպատակահարմար է (զբաղեցնում է), շատ դեպքերում հաշվի է առնում երեխաների նախասիրություններն ու ցանկությունները:

Տարիներ են անցել, մարզադահլիճները, խաղահրապարակները, ատլետիկական հատվածները ծայրահեղ անմխիթար վիճակում են: Մաշվել եւ շարքից դուրս են եկել մարզագործիքներն ու մարզագույքը: Հակահիգիենիկ վիճակում են սանհանգույցները: Նման պայմաններում խոսել ֆիզկուլտուրայի դասերի բավարար կազմակերպման մասին՝ հարկ չեմ համարում: Իսկ եթե դպրոցն ունի մեկ մարզադահլիճ՝ քանդված եւ ավերված, եթե դպրոցն ունի 20 դասարան, այսինքն՝ 60 դասաժամ, նշանակում է՝ մեկ օրվա դասացուցակում 12 դասաժամ, ֆիզկուլտուրայի մարզադահլիճ են մտնում միաժամանակ 2 դասարան, 50-60 աշակերտ: Հնարավո՞ր է արդյոք խոսել բավարար դասեր անցկացնելու մասին:

Առաջարկում եմ, որ Երեւանի քաղաքի դպրոցները, բացի իրենց եղած մարզադահլիճից, ստեղծեն մեկ կամ երկու հարմարեցված մարզադահլիճներ եւ դպրոցական մասնաշենքերի նկուղային հարկերում՝ հրաձգարաններ: Ի դեպ, այդպիսի հնարավորություններ ունեն մայրաքաղաքի գրեթե բոլոր դպրոցները: Հարմարեցված մարզադահլիճ կարող է ստեղծվել դպրոցների չգործող ճաշարանների կամ երկու դասասենյակների միացման ձեւով: Հարմարեցված մարզադահլիճները համապատասխան մարմնամարզական գործիքներով եւ գույքով կահավորելուց հետո կարող են ծառայել ֆիզիկական կուլտուրայի պետական ծրագրի մարմնամարզության բաժնի նյութի ուսուցմանը, որը ամենակարեւորն է: Հարմարեցված մարզադահլիճները կարող են ծառայել տարրական դասարանների համար, որոնք տարիներ շարունակ զրկված են եղել մարզադահլիճից օգտվելու հնարավորություններից, իսկ ֆիզկուլտուրայի դասերը ձեւական բնույթ են կրել: Կարծում եմ, որ ժամանակաշրջանը նպաստավոր է, իսկ առաջարկը պարտավորեցնող, կարեւորությունը՝ անհետաձգելի, նպատակը՝ առողջ սերունդ դաստիարակելը:

Հանրակրթական դպրոցի պահպանման ծախսերի նախահաշիվներում հատկացումներ են նախատեսվում խմբակների ղեկավարների աշխատանքի վարձատրման համար՝ 5-10 դասարան ունեցող դպրոցում՝ ուսուցչի 0,5 դրույք, 11-20 դասարան ունեցող դպրոցում՝ 1 դրույք, 21 եւ ավելի դասարան ունեցող դպրոցում՝ ուսուցչի 1,5 դրույք:

Ֆիզկուլտուրայի ուսուցիչները բազմիցս խնդրել են, որ խմբակների համար նախատեսված դրույքաչափերից 1/4 կամ 0,5 հատկացնեն իրենց, որովհետեւ ամենաշատ տանջվողներն ու չարչարվողները դպրոցում ֆիզկուլտուրայի ուսուցիչներն են: Բոլորս շատ լավ գիտենք, որ ուսումնական տարվա ընթացքում լինում են վերադաս կազմակերպությունների հաստատած մարզական-զանգվածային միջոցառումների օրացուցային պլանով նախատեսված մրցումներ եւ ելույթներ: Դպրոցները պարտադիր պետք է մասնակցեն պահանջվող միջոցառումներին: Այդ միջոցառումներին մասնակցելու համար ֆիզկուլտուրայի ուսուցիչները լարված եւ լրացուցիչ աշխատանքներ են կատարում՝ առանց լրացուցիչ վարձատրության, չեն արժանանում նույնիսկ դպրոցների տնօրենների ուշադրությանը եւ խրախուսանքին:

Խոսքս ուզում եմ հղել ՀՀ ԿԳ նախարարին, որ ժամանակն է ու հարկավոր է միջոցներ ձեռնարկել: Դուք կարող եք եւ պարտավոր եք հրահանգել ու պահանջել հանրապետության հանրակրթության հաստատություններին, որպեսզի վերականգնվեն արտադասարանական մարզական աշխատանքները դպրոցում եւ ֆիզկուլտուրայի ուսուցիչներին վճարել խմբակի համար նախատեսված դրույքաչափից: Առաջարկում եմ հարց բարձրացնել ՀՀ կառավարությունում, որպեսզի հանրակրթական դպրոցների մարզադահլիճները, խաղահրապարակները, գույքը եւ կահավորանքը առաջին հերթին հատկացնել մարզադպրոցների խմբերին ու արտադասարանական մարզական խմբերին՝ մարզումներն ու պարապմունքները անցկացնելու համար՝ մարզադահլիճը ազատ մնալու դեպքում՝ հատկացնեն միայն ըստ վարձակալության:

Արմատական փոփոխության կարիք ունի Երեւանի քաղաքի մանկապատանեկան մարզադպրոցների համակարգը: 1970-1990-ական թվականներին Խորհրդային Միության լուսավորության մինիստրությունից ֆիզիկական դաստիարակության մասնագետներ էին գործուղվում Հայաստան, որոնք այցելում էին հանրապետության տարբեր քաղաք-շրջանների հանրակրթական դպրոցներ եւ մարզադպրոցներ՝ ծանոթանում կամ ուսումնասիրում էին նախազորակոչային տարիքի պատանիների հետ տարվող ֆիզիկական դաստիարակության աշխատանքներին: Նրանք հիմնականում դժգոհում էին, որ Հայաստանից խորհրդային բանակ զորակոչված պատանիները կամային ու ֆիզիկական թույլ պատրաստություն ունեն, նրանցից ոչ մեկը լողալ չգիտի:

- Ինչպիսի՞ ֆիզիկական պատրաստությամբ եւ ինչպիսի՞ բարոյակամային հատկանիշներով է Հայկական բանակ մեկնում հայ պատանին:
- Հայկական բանակ մեկնած հայ պատանին ինչո՞ւ է դժվարանում ծառայության ընթացքում:
- Ի՞նչն է պատճառը, որ լինում են դեպքեր, երբ Հայկական բանակում հայ զինվորը դիմում է ծայրահեղ միջոցների:

Ահա այս հարցերը լուրջ մտահոգելու առիթ են տալիս, եւ հրատապ լուծում պահանջում:

Զորակոչված պատանին զինվոր է դառնում՝ ենթարկվելով բանակի ներքին կարգապահական կանոններին եւ օրվա աշխատակարգին: Ամենօրյա հագեցած ընդհանուր ֆիզիկական եւ մարտական պատրաստության պարապմունքների ծանրաբեռնվածությունը սկսնակ զինվորին անակնկալի է բերում, անակնկալի են բերում նաեւ եւ զինվորական կարգապահական կանոնները:

6-ամսյա ուսումնառության ճանապարհին՝ ֆիզիկական, շարային, մարտական, տակտիկական զինավարժությունների բեռնվածության հաղթահարելուն բանակ մեկնած զինվորը պատրաստ չլինելով՝ հայտնվում է մի հոգեվիճակում, որը թողնում է ծանր հետեւանքներ: Պարզից պարզ է, թե որտեղից է սկսվում ապագա զինվոր պատրաստելու գործընթացը: ԿԳ նախարարության համակարգում դպրոցականների ֆիզիկական պատրաստության եւ ռազմահայրենասիրական դաստիարակության ուղղությամբ տարվող աշխատանքներում բազմաթիվ բացթողումներ կան ու ամենակարեւորը՝ անտարբերությունը այս կարեւոր գործի նկատմամբ:

Պետության ու ազգային անվտանգության շահերից ելնելով՝ մի ծրագիր է հարկավոր իրագործել՝ «Առողջ մատաղ սերունդ դաստիարակելու եւ ռազմական ամուր թիկունք ունենալու» ծրագիր: Առաջիկա 2-3 տարիների ընթացքում վերակառուցել ու վերանորոգել Երեւան քաղաքի կրթական հաստատությունների մարզադահլիճները, հրաձգարանները, խաղահրապարակները եւ ատլետիկական հատվածները: Խաղահրապարակներում կառուցել ու կահավորել ՆԶՊ առարկայի համար ինքնաշեն գործիքների համալիր հատված:

Հանրապետության, ինչպես նաեւ Երեւան քաղաքի նախադպրոցական հիմնարկների, ուսումնական հաստատությունների եւ մարզադպրոցներին ու մարզակառույցներին մարզագույքով, մարզական գործիքներով, մարզահագուստով եւ օժանդակ տարբեր պարագաներով ապահովելու համար ստեղծել մասնագիտացված կենտրոնական բազա, որը մատչելի գներով ուսումնական հաստատություններին սպասարկի պահանջարկին համապատասխան մարզագույքով:

Կոչ եմ անում կրթության, ֆիզիկական դաստիարակության բնագավառի ղեկավարներին, դպրոցներում աշխատող ՆԶՊ զինղեկներին, դպրոցների տնօրեններին, ֆիզկուլտուրայի ուսուցիչներին, մարզադպրոցների տնօրեններին ու մարզիչներին՝ յուրաքանչյուրը թող խոսի իր սրտի ու խղճի հետ, յուրաքանչյուրը պետք է գիտակցի ու հասկանա՝ Հայկական բանակը հզոր է, եթե հզոր թիկունք ունի, այդ թիկունքը մենք պետք է լինենք՝ մեր վերաբերմունքով, մեր հավատով ու մեր պարտականությունների բարեխիղճ կատարմամբ: Մեր սրբազան պարտականությունն է դաստիարակել առողջ ու զինվորացու սերունդ Հայկական բանակի հզորացման համար:

ՊՈՂՈՍ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՀՀ վաստակավոր մարզիչ,
ՀՀ ժողովրդական կրթության գերազանցիկ
Երեւանի քաղաքապետարանի կրթության վարչության նախկին դպրոցական տեսուչ, թոշակառու

# «Վե՛րջ հայկական ստերին» կարգախոսով հանրահավաք Նյու Յորքում

## Դա ապրիլի 27-ին կկազմակերպի Երիտասարդ թուրքերի միությունը

Նյու Յորքը հակահայ գործունեության որջ է դարձել արտերկրի թուրքերի համար: Սրանց մեջ ի՞նչ թիվ են կազմում սաբաթայականները, այսինքն՝ սալոնիկյան ծագումով առերեւույթ մահմեդականություն ընդունած հրեաները, չգիտենք: Բայց որ սաբաթայականները Թալեաթի, Էնվերի, Ջեմալի գլխավորությամբ անմիջականորեն մասնակցել են Հայոց ցեղասպանության ծրագրմանը, կազմակերպմանն ու իրականացմանը Օսմանյան կայսրությունում, չմոռանալով, իհարկե, յուրացնել հայապատկան ամենահարուստ կալվածքներն՝ ամենաարժեքավոր գույքով հանդերձ, եւ ցեղասպանության հարցում Թուրքիայի պաշտոնական թեզը հանդիսացող ժխտողականության առավել ագրեսիվ պաշտպաններն են, ակնհայտ է:

Ագրեսիվությունը պայմանավորված է Հոլոքոստի բացառիկությունն ապահովելու, ինչպես նաեւ ցեղասպանության ծրագրմանը, կազմակերպմանն ու իրականացմանը անմիջականորեն մասնակցած հայ ժողովրդի սաբաթայական դահիճներին պաշտպանության տակ առնելու նկրտումներով: Օգտվելով առիթից նշենք, որ Նյու Յորքից է նաեւ Թուրքիայի Եվրամիության գծով նախարար Էգեմեն Բաղըշը, որի համար գործելակերպ է դարձել ամբաստանել հայտարարություններով Թուրքիայի քրիստոնյաներին, էթնիկ եւ կրոնական խմբավորումներին հրապարակավ վիրավորելը:

Վերջերս նա Շվեդիայում ասորական ցեղասպանության ճանաչմանն ուղղված ջանքերի համար «երազախաբությամբ զբաղվելու» մեջ էր մեղադրել հանդիպմանը հրավիրված ասորիներին, որոնց թվում՝ շվեդական խորհրդարանի ասորի պատգամավորին: Հարկ է նշել, որ խնդիրը սոսկ Բաղըշի ամբարտավանությունը չէ, այլ նրա ամբարտավան ոճի հակադրությունը քրիստոնյաների, էթնիկ եւ կրոնական այլ խմբավորումների հարցերում վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի չափավոր ոճին:

Համենայն դեպս ապրիլի 27-ին Նյու Յորքում Թուրք-ամերիկյան միությունների ֆեդերացիայի անդամ թուրքական կազմակերպությունները պատրաստվում են «Վե՛րջ հայկական ստերին» կարգախոսով հանրահավաքի: Ի դեպ, այս հանրահավաքը նախաձեռնել է Երիտասարդ թուրքերի միությունը: Մարտի 18-ին այդ մասին հայտնեց Նյու Յորքի Turkishny.com կայքէջը, Նյու Յորքում է նաեւ ԱՄՆ-ում գործող այս տխրահռչակ միության կենտրոնակայանը:

Ըստ Նյու Յորքի թուրքական կայքէջի՝ Երիտասարդ թուրքերի միության նախաձեռնությամբ «Վե՛րջ հայկական ստերին» կարգախոսով կազմակերպվող հանրահավաքը տեղի կունենա քաղաքի հանրահայտ «Թայմս սքվերում»: Հանրահավաքին, բացի Թուրք-ամերիկյան միությունների ֆեդերացիայի հովանու ներքո գործող թուրքական կազմակերպություններից, կմասնակցեն Նյու Յորքի «Ադրբեջան» եւ Ամերիկա-ադրբեջանական միություններն ու Թուրք-ադրբեջանական եղբայրության խումբը:

Հանրահավաքի առնչությամբ Երիտասարդ թուրքերի միությունը իր իսկ նախագահի՝ Թուլգա Թեքմանի ստորագրությամբ տարածել է հաղորդագրություն, որտեղ, ըստ կայքէջի, ասված է.

«ԱՄՆ-ի թուրքական համայնքը միաձայնաբար ոչ ասելով հայկական ստերին ու զրպարտություններին, պետք է տեր կանգնի մեր ազգային դատին: Ճշմարտությանը պետք է իրազեկ լինի համաշխարհային հասարակական կարծիքը: Ապրիլի 27-ը փառապանծ թուրքական դրոշի ներքո համախմբվելու եւ մեկ սիրտ, մեկ բռունցք դառնալու օր է: Մենք՝ Երիտասարդ թուրքերի միության անդամներս, երկամյա ծրագիր ենք կազմել, որ հանրահավաքներով, կոնֆերանսներով, սեմինարներով, ցուցահանդեսներով, վավերագրական ֆիլմերի ցուցադրությամբ պատասխան տանք ստելության արշավներին:

Ինչպես Խոջալուի կոտորածի ոգեկոչման հանրահավաքին մենք ուսուսի աջակցել ենք ադրբեջանցի եղբայրներին, այնպես էլ «Վե՛րջ հայկական ստերին» կարգախոսով կազմակերպվող հանրահավաքին ակնկալում ենք ադրբեջանցիների գլխավորությամբ թուրքեստանցի, ույղուր, ուզբեկ, թուրքմեն, մեսխեթցի թուրք, բոսնիացի, ղրիմցի, չեչեն եւ կարաչայցի եղբայրների մասնակցությունը, որը միշտ բազմապատկի մեր ուժը:

Եկեք լինենք միասին, միաձայնաբար ոչ ասենք հայկական ստերին, եկեք համատեղ հիշենք մեր շեհիդներին: Ամեն ինչ հանուն ավելի հզոր Թուրքիայի: Շեհիդին տեր կանգնելը հայրենիքին տեր կանգնել է»:

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

# Բաքվում բացահայտումներ են սպասվում

«Մուսավաթի» առաջնորդ Իսա Ղամբարի հայտարարությանը, որ «ընդդիմության մեջ կան օտարերկրյա գործակալներ», չափազանց բուռն է արձագանքել Ադրբեջանի սոցիալ-դեմոկրատական կուսակցության առաջնորդ Արազ Ալիզադեն: Publika.az-ի խնդրանքով մենաբանությամբ մի քանի ընդհանուր բնույթի «կսմիթներ» անելով Ղամբարին, Ալիզադեն այնուհետեւ ինքնավստահ հայտարարել է, որ «ժամանակին նա, Նեյմաթ Փանահովը, Աբուլֆազ Էլչիբեյը եւ մի շարք ուրիշներ եղել են ՊԱԿ-ի (ԽՍՀՄ Պետական անվտանգության կոմիտեի-Վ. Ա.) գործակալ»:

Իբրեւ ապացույց նա վկայակոչել է փաստը, որ երբ իրենց պահանջել են, որպեսզի բացվեն ադրբեջանական ՊԱԿ-ի արխիվները, որպեսզի «ժողովուրդն իմանա, թե ով ով է», Աբուլֆազ Էլչիբեյն ասել է, որ «այդ դեպքում հեղափոխություն կսկսվի, եղբայրը կսպանի եղբորը»: Ալիզադեն ավելացրել է, որ ներկայումս «Մուսավաթ» կուսակցության երկրորդ դեմք Արիֆ Հաջիլին ժամանակին «կյանքում մեկ անգամ անկեղծացել է եւ ասել, որ իրենք (Ադրբեջանի ժողովրդական ճակատը-Վ. Ա.) 9 երկրի համաձայնությամբ են իշխանության եկել»:

Սրանք, ինչպես նաեւ Ալիզադեի մյուս կծու ակնարկները Ղամբարի հասցեին, ինչ խոսք, որոշակի հետաքրքրություն ներկայացնում են: Բայց ավելի կարեւոր է, որ նա բառացիորեն հետեւյալն է փաստել. «Հունվարի 20-ից (1990թ.-ի-Վ. Ա.) առաջ գտնվելով Բաքվում, Եվգենի Պրիմակովը Վագիֆ Հուսեյնովին (Ադր. ԽՍՀ ՊԱԿ-ի նախագահին-Վ. Ա.) ասել է. «Իսա Ղամբարովին ձեռք չտաք, նա մեզ դեռ շատ է հարկավոր լինելու» (տես՝ http://www.publika.az/index.php?action=static-detail&static-id=43146): Ալիզադեն Պրիմակովին համարում է խորհրդային հատուկ ծառայությունների «վաղեմի գործակալ, որը հետագայում գլխավորել է Ռուսաստանի արտաքին հետախուզությունը»:

Գնահատականն, ըստ երեւույթին, իրականությանը չափազանց մոտ է: Պաշտոնաթողությունից հետո էլ Պրիմակովը երբեմն դելիկատ առաքելություններ է իրականացրել հատկապես Մերձավոր Արեւելքում: Բայց տվյալ դեպքում մեզ համար Ալիզադեի ասածը կարեւորվում է նրանով, որ Ադրբեջանի պետական քարոզչությունը Բաքվի հայկական ջարդերը համարում է «ՊԱԿ-ի կազմակերպած սադրանք»: Եթե ճիշտ է, որ Բաքվում Պրիմակովը հետաքրքրվել է Իսա Ղամբարի անվտանգությամբ, ուրեմն ՊԱԿ-ը գործել է ադրբեջանական ընդդիմության՝ ԱԺՃ-ի միջոցով: Հետեւաբար, հայկական ջարդերի եւ հետագա իրադարձությունների համար պատասխանատվությունն ընկնում է ՊԱԿ-ի գործակալ եղած ադրբեջանական ընդդիմության վրա:

Ուշագրավ է, որ 1990-ի հունվարի 19-ին Միխայիլ Գորբաչովը հեռախոսազրույց է ունեցել Հեյդար Ալիեւի հետ եւ պահանջել, որ նա «Բաքվի կենտրոնից հեռացնի իր մարդկանց»: Բաքվի կենտրոնում այդ պահին Վեզիրովի հրաժարականն էր պահանջում ԱԺՃ-ն, որի ղեկավարներից մեկն էլ Իսա Ղամբարն էր, այն ժամանակ՝ Ղամբարով: Ստացվում է, որ Բաքվում Եվգենի Պրիմակովը մտահոգված է եղել Հեյդար Ալիեւի մարդու, ՊԱԿ-ի գործակալ Իսա Ղամբարովի անվտանգությամբ եւ Վագիֆ Հուսեյնովից պահանջել է նրան ձեռք չտալ:

Իրոք, հունվարյան դեպքերից հետո ԱԺՃ որոշ ակտիվիստներ ձերբակալվել են, ոմանք փախել Իրան կամ Թուրքիա: Մինչդեռ Աբուլֆազ Էլչիբեյը եւ Իսա Ղամբարը, մի քանի օր Բաքվի «կոնսպիրատիվ» բնակարանում թաքնվելուց հետո բարեհաջող շարունակել են քաղաքականությամբ զբաղվել: Երկու տարի անց առաջինն ընտրվել է նախագահ, երկրորդը՝ խորհրդարանի խոսնակ: Մեկ տարի հետո՝ 1993թ. հունիսի 15-ին, Էլչիբեյը նախագահի նստավայրում Հեյդար Ալիեւի հետ երկժամյա փակ հանդիպումից հետո հեռացել է իր ծննդավայրը՝ Նախիջեւանի Քելեքի գյուղը, իսկ Իսա Ղամբարովը՝ հրաժարվել ԳԽ նախագահի պաշտոնից՝ տեղը զիջելով Հեյդար Ալիեւին:

Համարձակություն կունենա՞ Արազ Ալիզադեն ներկայացնելու Հեյդար Ալիեւ- ՊԱԿ-ի ԱԺՃ կապն ամբողջությամբ: Չենք կարող ասել: Բայց ակնարկներն իսկ բավական են, որպեսզի կարողանանք ուրվագծել դեպի իշխանություն Հեյդար Ալիեւի արյունոտ ճանապարհի հանգրվանները՝ Սումգայիթ, Բաքու, 1991-ի նոյեմբերի 20-ի ուղղաթիռի աղետ, ինչին զոհ գնաց Մութալիբովի գրեթե ողջ կառավարությունը եւ, վերջապես, Խոջալուի սպանդ...

Վ. Ա.



# Սիրիական ընդդիմությունը ընտրել է անցումային կառավարության վարչապետ

## ԱՄՆ-ը չի խոչընդոտի ապստամբների զինվելուն



**Ստամբուլում մարտի 18-19-ին անցկացվում էր սիրիական ընդդիմության գլխավոր կազմակերպության՝ Ազգային կոալիցիայի նիստը, որտեղ ընտրվել է Սիրիայի անցումային կառավարության վարչապետ: «Ալ Ջազիրա» հեռուստաալիքը հաղորդում է, որ այդ երկրորդ վարչապետը ընդդիմության առաջնորդներից է, անունը՝ Հասան Խիթթո: Նա հաղորդակցական տեխնոլոգիաների մասնագետ է, մի քանի տասնամյակ ապրել է ԱՄՆ-ում: Խիթթոյի իշխանությունը պետք է տարածվի ապստամբներին ենթակա շրջանների վրա:**

**Խիթթոյի թեկնածությունն ընդունվել է 48 քվեարկողներից 35-ի հավանությամբ: Սպասվում է, որ անցումային կառավարության ձեւավորումը կտեւի 2-4 շաբաթ:**

**Ազգային կոալիցիան ստեղծվեց 2012-ի վերջերին: Արեւմուտքի եւ Պարսից ծոցի մի շարք երկրներ այն համարում են Սիրիայի ժողովրդի միակ օրինական ներկայացուցիչ: Արաբական լիգայում կոալիցիան արդեն պաշտոնապես փոխարինում է Սիրիայի իշխանություններին:**

**Ինչ վերաբերում է սիրիացի ապստամբներին զենք մատակարարելու խնդրին, ԱՄՆ պետքարտուղար Ջոն Քերրին երեկ Վաշինգտոնում հայտարարել է, որ իր երկիրը չի խոչընդոտի դաշնակիցներին, եթե նրանք որոշեն զինել ապստամբներին: Այդ մասին հաղորդում է Ասոշիեյթեդ պրես գործակալությունը:**

**Ավելի վաղ Ֆրանսիան եւ Մեծ Բրիտանիան Եվրամիությանը կոչ էին արել վերացնել Սիրիայի զինամատակարարման արգելքը: Պետքարտուղարի խոսքերով, Օբամայի վարչակազմը չի միջամտի նման դեպքերում: Քերրին ավելացրել է, որ ԱՄՆ-ը մտադիր է առաջվա պես Սիրիա առաքել միայն մարդասիրական օգնություն:**

**Ֆրանսիայի եւ Մեծ Բրիտանիայի իշխանությունները նշում են, որ եթե Եվրամիությունը չվերացնի բռնարգելքը, ապա Փարիզը եւ Լոնդոնը «ինքնուրույնաբար» կլուծեն սիրիացի ապստամբների զինամատակարարման հարցը: ԵՄ բռնարգելքի ժամկետն ավարտվում է 2013-ի մայիսին:**

**Ներկայումս ապստամբներին զենք է մատակարարում Արաբական պետությունների լիգան: Ամեն տեսակ զենք ու զինամթերք մատակարարելու Լիգայի որոշումը մտահոգում է Արեւմուտքի երկրներին. այնտեղ վախենում են, որ դա կհանգեցնի արմատական իսլամիստական խմբերի հզորացմանը:**

# Պայթյուններ Իրաքի օկուպացման 10-ամյակի օրը

## Հանս Բլիքսի տխուր հավաստումները

Բաղդադում եւ շրջակայքում երեկ տեղի են ունեցել մի շարք պայթյուններ, որոնց հետեւանքով առնվազն 25 մարդ է սպանվել, հաղորդում է Ռոյթեր գործակալությունը: Միայն Բաղդադում սպանվել են 21, վիրավորվել մոտ 100 անձինք, նշում է BBC-ն:

Ահաբեկչություններն իրականացվել են մայրաքաղաքի գլխավորապես շիաբնակ թաղամասերում: Ֆրանսպրեսի տվյալներով, ռումբերը դրված են եղել առնվազն 7 ավտոմեքենաների մեջ, ինչպես նաեւ ճամփեզրերին:

Որեւէ կազմակերպություն պատասխանատվություն չի ստանձնել այդ պայթյունների համար, որոնք համընկան 21-րդ դարի առավել վիճահարույց եւ արյունալի ռազմական արկածախնդրության ծավալման 10-րդ տարելիցին: Այն ժամանակ՝ 2003-ին, ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան եւ նրանց դաշնակիցները Իրաքի դեմ պատերազմի սանձազերծումը փորձեցին արդարացնել Իրաքում իբր գոյություն ունեցող զանգվածային բնաջնջման զենքով, որն այդպես էլ չհայտնաբերվեց: Ըստ որում, մեծ տերությունների ղեկավարները չէին ուզում լսել սթափ մարդկանց փաստարկները, ում Իրաք էին ուղարկում նման զենքի հետքեր գտնելու:

Այդ սթափ մարդկանցից մեկը ՄԱԳԱՏԷ-ի նախկին տնօրեն, ՄԱԿ-ի սպառազինությունների գծով գլխավոր տեսուչ Հանս Բլիքսն է, որը Իրաքում իր գործընկերների հետ աշխատեց 1 տարուց ավելի: Վերջերս CNN հեռուստաընկերության համար պատրաստած հոդվածում Բլիքսը Իրաքի պատերազմն անվանում է «ահավոր սխալ եւ ՄԱԿ-ի կանոնադրության խախտում»: 2003-ի ներխուժումից 10 տարի է անցել, բայց Իրաքը մնում է աշխարհի ամենավտանգավոր երկրներից մեկը, որը բզկտվում է ծայրահեղական ելուզակախմբերի գործողությունների, էթնիկական ու կրոնական երկպառակությունների հետեւանքով: Միջազգային կոալիցիայի ուժերը 10 տարվա ընթացքում Իրաքում մոտ 5 հազար մարդ են կորցրել, իսկ սպանված խաղաղ իրաքցիների թիվը, տարբեր հաշվարկների համաձայն, 700 հազարից մինչեւ մեկուկես միլիոն է: Էլ չենք խոսում եզակի պատմական հուշարձանների, թանգարանային եւ այլ արժեքների ոչնչացման մասին:

«ԵՐԵՎԱՆՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ»

# Վիեննայի ֆիլհարմոնիկ նվագախումբը շուտով Հայաստանում

## *Ապրիլի 11-ին Հայաստանը կհյուրընկալի նվագախմբին*

«Երեւանյան հեռանկարներ» միջազգային երաժշտական փառատոնի 14-րդ համերգաշրջանը կբացվի աշխարհահռչակ Վիեննայի ֆիլհարմոնիկ նվագախմբի համերգով եւ կամփոփվի Սիդնեյի մեծ սիմֆոնիկ նվագախմբով:

Վիեննայի ֆիլհարմոնիկ նվագախմբի հայաստանյան համերգը կղեկավարի 11 «Գրեմմի» մրցանակների արժանացած ամերիկացի հռչակավոր դիրիժոր Մայքլ Թիլսոն Թոմասն, իսկ մենակատարը կլինի հանրահայտ դաշնակահար Եֆիմ Բրոնֆմանը:

Ապրիլի 11-ին կայանալիք համերգին կհնչի Ֆրանց Շուբերտի «Ռոզամունդ» դո մաժոր նախերգանքը, Յոհաննես Բրամսի թիվ 1 սոլ մինոր դաշնամուրային կվարտետը՝ Առնոլդ Շյոնբերգի փոխադրությամբ:




Փառատոնի առթիվ մշակույթի նախարարության ժամանակակից արվեստի վարչության պետի տեղակալ Արամ Գյուրջյանն ասաց. «Մշակույթի նախարարության համար նմանատիպ փառատոնները լուրջ ռազմավարական հենակետ են հանդիսանում: Այն հայ հանդիսականի համար ապահովում է մշակութային բազմազանություն»:

Այս տարի «Երեւանյան հեռանկարներ» միջազգային երաժշտական փառատոնին կյուրընկալվեն նաեւ «Շանհայ» քառյակը, Սիդնեյի սիմֆոնիկ նվագախումբը՝ Վլադիմիր Աշկենազիի ղեկավարությամբ, աշխարհահռչակ բարիտոն Դմիտրի Խվորոստովսկին, դիրիժոր Կոնստանտին Օրբելյանը, Ստեֆան Վիլլիխը, Ալեքսեյ Լյուբիմովը եւ տեղի կունենա Յուրի Բաշմետ-60 հոբելյանական համերգը, տեղեկացրեց փառատոնի մենեջեր Սոնա Հովհաննիսյանը:

«Երեւանյան հեռանկարներ» միջազգային երաժշտական փառատոնի հիմնադիր-նախագահ Ստեփան Ռոստոմյանը նշում է, որ փոքրիկ Հայաստանն այսօր իր մշակութային միջոցառումներով ներկայանում է հզոր երկրների կողքին եւ ընդգծում, որ փառատոնն այսօր դարձել է Հայաստանի այցեքարտը. «Աշխարհի հայտնի երաժիշտներն իրենք են դիմում, որպեսզի մասնակցեն մեր փառատոնին: Օրեր առաջ ստացանք «Լա Սկալա» օպերային թատրոնից առաջարկ, որպեսզի մասնակցեն մեր փառատոնին: Նախկինում նման բանի մասին մենք նույնիսկ երազել չէինք կարող: Իսկ այս տարի կյուրընկալենք Վիեննայի ֆիլհարմոնիկ նվագախմբին, որը դասական երաժշտության իրական դեմքն է»:

Ստեփան Ռոստոմյանը նշեց նաեւ, որ Վիեննայի ֆիլհարմոնիկ նվագախմբի համերգները լսելու համար նույնիսկ իրենց հայրենիքում մի քանի տարի առաջ են տոմսերը գնում եւ շատ հաճախ նվագախումբը հենց ինքն է ընտրում, թե համերգին ովքեր պետք է ներկա գտնվեն:

Վիեննայի ֆիլհարմոնիկ նվագախումբն ստեղծվել է 1842թ., որտեղ աշխատել են ականավոր դիրիժորներ եւ կոմպոզիտորներ, ինչպիսիք են՝ Ռիխարդ Վագները, Ջուզեպպե Վերդին, Անտոն Բրուքները, Յոհաննես Բրամսը, Ֆերենց Լիստը, Գուստավ Մալերը եւ այլք: Անցյալ դարաշրջանում նվագախմբի համար նշանակալից էին երկարատեւ համագործակցությունները Արթուրո Տոսկանինիի, Վիլհելմ Ֆյուրտվանգլերի, Կառլ Բոմի, Հերբերտ ֆոն Կարայանի եւ Լեոնարդ Բերնստայնի հետ: Նվագախումբը կազմակերպում է հանրահայտ «Ամանորյա համերգը», որը հեռարձակվում է ավելի քան 70 երկրներում:

Նշենք, որ Մայքլ Թիլսոն Թոմասը Սան Ֆրանցիսկոյի սիմֆոնիկ նվագախմբի երաժշտական տնօրենն է, որը եղել է նաեւ Բաֆալոյի ֆիլհարմոնիկի երաժշտական տնօրենը, ինչպես նաեւ Լոս Անջելեսի ֆիլհարմոնիկ նվագախմբի գլխավոր հրավիրյալ դիրիժոր: Նրա տասնյոթամյա գործունեությունը Սան Ֆրանցիսկոյի սիմֆոնիկ նվագախմբի երաժշտական տնօրենի պաշտոնում լայնորեն լուսաբանվել է միջազգային մամուլում:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

# Ռուբեն Գեւորգյանը վերընտրվեց Հայաստանի կինեմատոգրաֆիստների միության նախագահ

Հայաստանի կինեմատոգրաֆիստների միության նախագահի պաշտոնում վերընտրվեց Ռուբեն Գեւորգյանը:

Երեկ տեղի ունեցավ Հայաստանի կինեմատոգրաֆիստների միության 11-րդ համագումարը, որին 191 անդամներից ներկա 174 կինոգործիչները միաձայն բաց քվեարկությամբ ընտրեցին Գեւորգյանին:

Նշենք, որ 2009 թվականից Գեւորգյանը ղեկավարում է Հայաստանի կինեմատոգրաֆիստների միության նախագահի պաշտոնը:

Գ. Գեւորգյանը նկարահանել է մոտ 70 ֆիլմ, մասնակցել է բազմաթիվ տեղական եւ միջազգային կինոփառատոների եւ արժանացել 21 դիպլոմի եւ մրցանակների, որոնցից 6-ը՝ գլխավոր: Հեղինակել է 2 գիրք: 2006 թվականին արժանացել է ՀՀ ժողովրդական արտիստի կոչմանը:



Գեղանկարիչ Լեւոն Կոջոյան

# Պահի ընդհանրացում, ակնթարթի արժեք

## *Տաթեւիկ Մնացականյանի տպավորիչ հայտը*

«Ակադեմիա» պատկերասրահի փոքր մի տարածք (մոտ 6 քմ) տրամադրված էր լուսանկարիչ-դիզայներ Տաթեւ Մնացականյանին, որտեղ նա կարողացել էր ներկայացնել խոշոր չափսի (1.20x80) 24 լուսանկար, որ արդեն իսկ խիտ հագեցած միջավայր էր ստեղծում եւ առավել էմոցիոնալ ազդեցություն էր թողնում յուրաքանչյուր գործի ընդգծված կերպարայնության շնորհիվ: Շարքը խորագրված է «Արվեստի հայ երախտավորների, ի մասնավորի նկարիչ-քանդակագործների ֆոտոպորտրետներ»: Սա լուսանկարչի վերջին տարիներին մտահղացված բավական ծավալուն ծրագրի մի հատվածն է՝ նվիրված հայ մշակույթում ներդրում ունեցող ավագ սերնդի արվեստագետներին, որոնցից ոմանք իրենց ապրած ժամանակաշրջանում, ցավոք, արդեն մոռացված են:



Գեղանկարիչ Ելենա Աբրահամյան

Տաթեւ Մնացականյանը փնտրում-գտնում է նրանց, հանդիպում, զրույցներ ունենում, փորձում հասկանալ կյանքի մայրամուտի շեմին գտնվող այս մարդկանց հոգեվիճակը, զգացումները: Այդ զրույցների միջոցով ճանաչողության փորձի ընթացքում որպես լուսանկարիչ իր համար բացահայտում է կերպարի բնութագրական կողմերը, ինչն էլ օգնում է օբյեկտիվին՝ որսալու ամենաճիշտ պահը, այն ակնթարթը, որն ընդհանրացնում է տվյալ անհատին, կամ ընդգծում նրա ամենաբնութագրական հատկանիշը: Ստեղծագործական տարրից բացի, այս աշխատանքը իր համար մեկ այլ կարեւոր արժեք ունի. ինքը փորձում է մերժել մոռացության մատնելու սովորույթ- արատը եւ տեսնել, գնահատել արվեստագետին, երբ նա մեր կողքին է, եւ ոչ թե՝ հետմահու միայն: Իսկ ոմանց պարագայում դա, իրոք, այդպես է:

Այս մարդկանց նա հանդիպում է իրենց հարազատ միջավայրում՝ ստեղծագործական կամ ոչ, բայց բնական, ճիշտ վիճակներում, որն էլ հիմնականում ապահովում է կերպարի հաջողությունը:

Տաթեւ Մնացականյանը նպատակ ունի իր ծրագրի միջազգայնացման՝ ներգրավելով ինչպես սփյուռքահայ, նաեւ օտար արվեստագետների եւ ստեղծելու մշակութային յուրատեսակ «լուսանկարչական» երկխոսություն: Առաջին նման քայլը անցած աշնանը Եգիպտոս այցելելն էր, հանդիպումները հայ եւ եգիպտացի վաստակ ունեցող, տարեց արվեստագետներին:

«Ակադեմիա» պատկերասրահում հիշյալ 24 լուսանկարների միասին ցուցադրությունը մշակութային մի էպոխայի հիշողություն է. մարդիկ, որոնք ապրել ու ստեղծագործել են միեւնույն ժամանակ, իրարից որքան տարբեր, նաեւ մոտ: Տաթեւի համար ցուցահանդեսը զուտ իր աշխատանքների ցուցադրություն չէ, այլեւ լուսանկարների միջոցով ստեղծել իր հերոսների այնպիսի միջավայր, որտեղ առաջին պլանում նրանք պիտի երեւան: «Ակադեմիա» պատկերասրահի ցուցադրությունը հաստատում էր իր այս մոտեցումը: Միջավայրը ապահովում էր կերպարի խարակտերայնությունը, որտեղ ամենից բնորոշը դինամիզմն է, որ հաղորդակցման եւ անմիջականության կենդանի զգացողությամբ է օժտված եւ արագ փոխանցելի է դարձնում դիտողին: Քանի իր հերոսները տարեց մարդիկ են, լուսանկարչական օբյեկտիվը ասես սեւեռվում եւ արձանագրում է արտաքինի՝ մազի գույնի, դեմքի խորշոմի, հայացքի ամեն մանրամաս, միաժամանակ նրանց ձեռքի մի շարժումի, դիրքի, դիմարտահայտության միջոցով հայտնաբերում կերպարին հարազատ ներքին պահի վիճակը: Այսպիսի տպավորություն են թողնում Հակոբ Հակոբյանի, Էդվարդ Միրզոյանի, Լեւոն Կոջոյանի լուսանկարները, արտահայտչականության առումով շատ տպավորիչ է Ելենա Աբրահամյանի կերպարը, բնորոշտիպական են Լեւոն Հովհաննիսյանի, Զաքար Խաչատրյանի լուսանկարները: Երիտասարդ, շնորհալի արվեստագետը պրպտող միտք ու ստեղծագործական մոտեցում է ցուցաբերում, լուսանկարչության յուրաքանչյուր պահ, յուրաքանչյուր պորտրետ վերածելով գեղարվեստական ակտի:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

# «Դոջ» հավաքածուից նկարներ՝ Հայկական գրադարան-թանգարանին

Ամերիկայի հայկական գրադարան-թանգարանը (ALMA) ձեռք է բերել հայազգի նկարիչների ութ կտավներ «Դոջ» հավաքածուից, տեղեկացնում է «Արմինյն միրոր-սփեքթեյթր» շաբաթաթերթը: Կտավները թանգարանին է նվիրել Նորտոն Դոջի այրին՝ Նենսի Դոջը:

Պրոֆ. Նորտոն Դոջն այն անձնավորությունն էր, որի ջանքերով, ըստ հաղորդագրության, Միացյալ Նահանգներում հայտնվեցին 1980-ականների վերջերից մինչեւ 2005 թվականը ստեղծված արվեստի գործեր, որոնք էլ կազմեցին «խորհրդային արվեստի Դոջ հավաքածուն»: Դրանում ընդգրկված են ավելի քան երկու հազար նկարիչների մոտ 20 հազար կտավներ, որոնք «նոնկոնֆորմիստական» (դիսիդենտական) են բնորոշվել ընդհանուր առմամբ: Դրանցում ավելի քան հազար կտավներ հայ արվեստագետների ձեռքի գործերն են: Կտավների մեծ մասը մանրամասն ներկայացված են 1995-ին Նորտոն Դոջի եւ Ալլա Ռոզենֆելդի կազմած «From Gulag to Glasnost» ալբոմում:

Դոջը մասնագիտությամբ տնտեսագետ է եղել եւ առաջին անգամ Խորհրդային Միություն է այցելել 1955-ին: Հետագա տարիներին է, որ սկսել է կապեր հաստատել դիսիդենտ նկարիչների հետ եւ ձեռք բերել նրանց կտավները: Նրա ձեռքբերումների մասին գրվել է «The Ransom of Russian Art» (1994) գրքում:

Ամերիկայի հայկական Գրադարան-թանգարանին նրա այրու՝ Նենսի Դոջի նվիրած կտավները նկարիչներ Արմեն Ադիխանյանի, Ֆելիքս Եղիազարյանի, Վարդան Գաբրիելյանի, Սարգիս Համալբաշյանի, Աշոտ Ղազարյանի եւ Սամուել Խաչիկյանի ստեղծագործություններն են:

Նախատեսվում է, որ առաջիկա սեպտեմբերին այդ կտավները ներկայացվեն արվեստասեր հասարակությանը: Հ. Ծ.

# Դավիթ Սաֆարյանը նվաճեց Եվրոպայի չեմպիոնի տիտղոսը



Թբիլիսիում մեկնարկել է ըմբշամարտի Եվրոպայի առաջնությունը, որի պարգեւները վիճարկողների թվում են նաեւ հայ ըմբիշները: Առաջինը մրցագորգը տրամադրվել է ազատ ոճի ըմբիշներին:

Մրցումների առաջին օրը մրցագորգ էին դուրս եկել մինչեւ 66 եւ 96 կգ քաշային ըմբիշները: Մեկնարկը հաջող էր Հայաստանի հավաքականի համար: Առաջին մեդալը մեր հավաքականին պարգեւեց մինչեւ 66 կգ քաշային Դավիթ Սաֆարյանը, որը Եվրոպայի չեմպիոն հռչակվեց:

Դավիթը մրցումները սկսեց 1/8 եզրափակիչից՝ առաջին գոտեմարտում 3-1 հաշվով հաղթելով ֆրանսիացի Մաքսիմ Էրիկ Ֆիկեին: Քառորդ եզրափակիչում հայ ըմբիշի մրցակիցը բելառուս Ալեքսանդր Կոնտոեւն էր: Այս գոտեմարտում էլ Դավիթն իրեն լավ դրսեւորեց եւ առավելության հասավ մրցակցի նկատմամբ (3-1): Նույնպիսի հաշվով Սաֆարյանը պարտության մատնեց նաեւ մոլդովացի Միխայ Սավային եւ մտավ եզրափակիչ:

Վճռորոշ գոտեմարտում Սաֆարյանի մրցակիցը թուրք Յակուպ Գոռն էր: Դավիթը կրկին իրեն գերազանց դրսեւորեց ու հաղթելով 3-0 հաշվով, արժանացավ ոսկե մեդալի:

Մինչեւ 96 կգ քաշային կարգում Հայաստանը ներկայացրեց Էդգար Ենոքյանը: Առաջին գոտեմարտում հայ ըմբիշը պարտության մատնեց մոլդովացի Նիկոլայ Չեբանին: Քառորդ եզրափակիչում Ենոքյանին չհաջողվեց հաղթահարել ալբանացի Էգզոն Շալայի դիմադրությունը: Պարտություն կրելով, Դավիթը դուրս մնաց մեդալների համար մղվող հետագա պայքարից:

# Մոսկվայի «Դինամոն» եւ այլ ակումբներ հետաքրքրված են Արաս Օզբիլիսով



Մոսկվայի «Դինամոյի» գլխավոր մարզիչ Դան Պետրեսկուն եւ եվրոպական մի քանի առաջատար ակումբներ հետաքրքրված են Հայաստանի հավաքականի եւ Կրասնոդարի «Կուբանի» 23-ամյա կիսապաշտպան Արաս Օզբիլիսի ծառայություններով: Այդ փաստը հաստատել է ֆուտբոլիստի գործակալ Դմիտրի Սելյուկը, նշելով, որ շուտով Օզբիլիսի համար առաջատար ֆուտբոլային ակումբների միջեւ մրցակցություն է ծավալվելու:

Մոսկովյան «Իզվեստիա» թերթի թղթակցի հետ զրույցում **Սելյուկը** բարձր է գնահատել Արաս Օզբիլիսին. «Օզբիլիսը բոլոր հնարավորություններն ու տվյալներն ունի բարձրակարգ ֆուտբոլիստ դառնալու: «Կուբանում» նրա ներկայիս հիանալի ելույթները ֆուտբոլիստի հնարավորությունների սահմանը չեն: Իր գերազանց խաղի շնորհիվ Արասն արդեն այժմ հայտնվել է եվրոպական առաջատար ֆուտբոլային ակումբների մարզիչների ուշադրության կենտրոնում: Նրանով հետաքրքրվում է ոչ միայն Մոսկվայի «Դինամոն»: Ներկայումս 2 կոնկրետ առաջարկ ենք ստացել առաջատար ֆուտբոլային երկրների առաջնությունների մասնակից թիմերից, որոնք մշտապես հանդես են գալիս եվրոգավաթներում: Համոզված եմ, որ «Կուբանի» ղեկավարությունը չի արգելի Օզբիլիսին տեղափոխության հարցում, քանի որ պայմանագրում նման կետ կա»:

Արաս Օզբիլիսը հոլանդական «Այաքսի» ֆուտբոլային դպրոցի սան է: 2009-ին «Այաքսը» նրա հետ լիարժեք պրոֆեսիոնալ պայմանագիր կնքեց: Այդ տարի հայ ֆուտբոլիստը ճանաչվեց թիմի ամենատաղանդավոր երիտասարդ խաղացող: Սկզբում նա մտադրվել էր հանդես գալ Հոլանդիայի ազգային հավաքականում: Սակայն երբ Վարդան Մինասյանը հանդիպեց Օզբիլիսի հետ՝ նրան հրավիրելով Հայաստանի ազգային հավաքական, Արասն ուրախությամբ համաձայնվեց հանդես գալու հայկական եռագույնի ներքո:

Անցյալ տարվա օգոստոսին Օզբիլիսը տեղափոխվեց «Կուբան», որում հանդես է գալիս նաեւ Մարկոս Պիզելին: ՀՀ հավաքականի 2 ֆուտբոլիստները լավ են համագործակցում միմյանց հետ: Թիմի կազմում անցկացրած 16 հանդիպումներում Օզբիլիսը 8 գոլի հեղինակ է դարձել՝ հայտնվելով ՌԴ առաջնության լավագույն ռմբարկուների տասնյակում: Ի դեպ, «Կուբան» Օզբիլիսին հրավիրել էր հենց Դան Պետրեսկուն, որը հետագայում տեղափոխվեց Մոսկվայի «Դինամո»:

Արաս Օզբիլիսը «Կուբանի» հետ գործող պայմանագիր ունի մինչեւ 2016-ի ամառը: Մասնագետները նրա տրանսֆերը գնահատում են 3,5 մլն եվրո:

Օզբիլիսի մասին կարծիք է հայտնել նաեւ ռուս անվանի մարզիչ **Բորիս Իգնատեւը**. «Ջմռան նախապատրաստական շրջանում ինձ բախտ է վիճակվել հետեւել Օզբիլիսի գործողություններին: Նա առաջին հերթին աչքի էր ընկնում իր արագաշարժությամբ եւ հիանալի հուժկու հարվածներով: Իրոք «Կուբանում» Արասն առանցքային դերակատարություն ունի: Սակայն իմ կարծիքով դեռ վաղ է խոսել բարձրակարգ թիմ տեղափոխվելու մասին: Նա պետք է դեռ ավելացնի ու կատարելագործի խաղային իր որակները: Օրինակ, երբ Մովսիսյանը տեղափոխվում էր Մոսկվայի «Սպարտակ», բոլոր մասնագետներն արդեն գիտեին, որ նա մեծ ներուժով բարձրակարգ ֆուտբոլիստ է: Յուրային հարկավոր էր միայն հաստատել իրեն վերագրվող բնութագիրը: Իսկ Արասին դեռեւս հարկ կլինի դրսեւորել իր բարձր կարգը»:

Ցավոք, Արաս Օզբիլիսը վնասվածքի պատճառով չի կարող մասնակցել չեխերի հետ ընտրական մրցախաղին: Դա ՀՀ հավաքականի համար մեծ կորուստ է: Նա վնասվածք էր ստացել «Կուբանի» մարզման ժամանակ, գնդակին հարվածելիս: Պարզվել է, որ Արասը վնասել է ծնկի կողային կապանը: Օզբիլիսը ներկայումս Հոլանդիայում է, որտեղ մարտի 22-ին եւս մեկ բուժզննում կանցնի:

# Մոուրինյուն ամենաբարձր վարձատրվող մարզիչն է

«Ֆրանս Ֆուտբոլ» շաբաթաթերթը հրապարակել է ամենաբարձր վարձատրվող մարզիչների ցանկը: Այն գլխավորում է Մադրիդի «Ռեալի» գլխավոր մարզիչ Ժոզե Մոուրինյուն, որի տարեկան վաստակը 14 մլն եվրո է:

2-րդ տեղում ֆրանսիական ՊՍԺ-ի գլխավոր մարզիչ Կառլո Անչելոտին է՝ 12 մլն եվրո: Եռյակը եզրափակում է իտալացի Մարչելո Լիպին, որը ներկայումս մարզում է չինական «Գուանչժոու Էվերգրանդ» ակումբը: Նրա տարեկան աշխատավարձը 11 մլն եվրո է:

4-րդ տեղում Մախաչկալայի «Անժիի» գլխավոր մարզիչ Գուս Հիդինգն է՝ 10,8 մլն եվրո: ՌԴ հավաքականի գլխավոր մարզիչ Ֆաբիո Կապելլոն ցուցակում 7-րդն է իր 9,2 մլն եվրո աշխատավարձով: Իսկ «Զենիթի» գլխավոր մարզիչ Լուչանո Սպալետին 5,5 մլն եվրոյով 12-րդ հորիզոնականն է զբաղեցնում:

ՇԱԽՄԱՏ

# Կառլսենը Արոնյանի հետ գլխավորեց աղյուսակը

Մեկօրյա հանգստից հետո Լոնդոնում ընթացող շախմատի աշխարհի չեմպիոնի տիտղոսի հավակնորդների մրցաշարի մասնակիցները կրկին նստեցին խաղասեղանների շուրջը՝ անցկացնելով 4-րդ տուրի հանդիպումները: Մրցաշարի միանձնյա առաջատար Լեւոն Արոնյանը սպիտակներով խաղում էր ռուսաստանցի Պյոտր Սվիդլերի հետ: Նրանց մրցավեճն առաջինն ավարտվեց: Մրցակիցները 31-րդ քայլին հաշտություն կնքեցին: Արոնյանը վաստակեց 3 միավոր ու պահպանեց առաջատարի դիրքը: Սվիդլերն ունի 2,5 միավոր:

Մոտ 2 ժամ անց Արոնյանին միավորներով հավասարվեց Մագնուս Կառլսենը՝ տոնելով 2-րդ անընդմեջ հաղթանակը Ալեքսանդր Գրիշչուկի հետ մրցավեճում: Պարտիան ավարտվեց 37-րդ քայլին: Մրցաշարի հետնապահներ Գելֆանդն ու Իվանչուկը հաշտություն կնքեցին, իսկ Ռաջաբով-Կրամնիկ պարտիան թերթը տպագրության ուղարկելու պահին դեռեւս շարունակվում էր:

Այսօր կայանալիք 5-րդ տուրում Լեւոն Արոնյանը սեւերով կմրցի Վլադիմիր Կրամնիկի հետ: Մագնուս Կառլսենի մրցակիցը կլինի Վասիլի Իվանչուկը: Կկայանան նաեւ Սվիդլեր-Գելֆանդ, Գրիշչուկ-Ռաջաբով պարտիաները:

# Դիլիջանը կհյուրընկալի Գրան պրիի մասնակիցներին

**ՖԻԴԵ-ն հրապարակել է շախմատի կանանց Գրան պրիի նոր խաղարկության խաղացանկը: Մրցաշարի 2-րդ փուլը կանցկացվի Դիլիջանում այս տարվա հունիսի 15-29-ը: Իսկ մեկնարկը կտրվի շվեյցարական Ժնեւ քաղաքում, մայիսի 2-ին:**

**Գրան պրիի 3-րդ փուլի մասնակիցներին կհյուրընկալի Ուզբեկստանի մայրաքաղաք Տաշքենդը: Մրցաշարը կանցկացվի սեպտեմբերի 17-ից հոկտեմբերի 1-ը: Մյուս 3 փուլերը կանցկացվեն հաջորդ տարի: 4-րդ փուլը տեղի կունենա Ռուսաստանի Խանտի-Մանսիյսկ քաղաքում մայիսի 2-16-ը: Հունիսի 18-ից հուլիսի 2-ը շախմատիստուհիները մրցավեճի կբռնվեն Թբիլիսիում: Իսկ ավարտական փուլը տեղի կունենա օգոստոսի 24-ից սեպտեմբերի 7-ը Մոնղոլիայի Էրդենետ քաղաքում:**

# Ուժեղագույնն ուսանող հանդբոլիստներն են



**Երեւանի ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի մարզասրահում իրենց մրցավեճն ավարտեցին մինչեւ 19 տարեկան հանդբոլիստները, որոնք վիճարկում էին Հայաստանի չեմպիոնի տիտղոսը: Մրցապայքարի էին դուրս եկել 4 թիմեր՝ Վանաձորի, Արցախի, հանդբոլի մասնագիտացված մարզադպրոցի ներկայացուցիչներն ու Հայաստանի ուսանողական հավաքականը:**

**Մեկնարկային խաղում ուժերը չափեցին Վանաձորի եւ Արցախի թիմերը: 40-35 հաշվով հաղթեցին վանաձորցիները: Ավելի համառ պայքարում անցավ ՀՄԴ-ի եւ ուսանողական հավաքականի հանդիպումը: Առաջին խաղակեսից հետո 14-11 հաշվով առջեւում էին ՀՄԴ-ի ներկայացուցիչները, սակայն ուսանող հանդբոլիստներին ի վերջո հաջողվեց հաղթել (26-23):**

**Մրցումների 2-րդ օրը ուսանող հանդբոլիստները կրկին հաջող հանդես եկան՝ 31-23 հաշվով պարտության մատնելով վանաձորցիներին: Իսկ ՀՄԴ-ի թիմը 28-33 հաշվով առավելության հասավ արցախցիների նկատմամբ:**

**Չեմպիոնը հայտնի դարձավ ավարտական տուրում: Հայաստանի ուսանողական հավաքականը 3-րդ անընդմեջ հաղթանակը տոնելով արցախցիների նկատմամբ (28-23), ճանաչվեց լավագույնը՝ պարգեւատրվելով ոսկե մեդալով:**

**Արծաթե մեդալների հարցը վճռվեց Վանաձորի եւ ՀՄԴ-ի մրցավեճում, որում դրամատիկ պայքար ծավալվեց: Առաջին խաղակեսում ավելի դիպուկ էին վանաձորցիները, որոնք հաղթում էին 17-14 հաշվով: Սակայն ընդմիջումից հետո ՀՄԴ-ի հանդբոլիստներին հաջողվեց բեկում մտցնել մրցակցությունում եւ խաղավարտից 30 վրկ առաջ վերականգնել հավասարակշռությունը՝ 30-30: Իսկ վերջին վայրկյաններին ՀՄԴ-ն խփեց հաղթական գոլը ու շահելով մրցախաղը, դարձավ առաջնության 2-րդ մրցանակակիր՝ բրոնզե մեդալները թողնելով վանաձորցիներին:**

# Դեւիդ Հեյը մտադիր է ռինգ վերադառնալ

**Քաշային երկու կարգերում աշխարհի նախկին չեմպիոն, 32-ամյա բրիտանացի պրոֆեսիոնալ բռնցքամարտիկ Դեւիդ Հեյը որոշել է շարունակել ելույթները: Նա խորհրդակցելով իր մարզիչների եւ պրոմոութերի հետ, ծրագրել է ռինգ դուրս գալ հուլիսի 6-ին:**

**Դեւիդ Հեյը ցանկանում է մենամարտել WBC-ի վարկածով գերծանրքաշային կարգում աշխարհի ներկայիս չեմպիոն Վիտալի Կլիչկոյի կամ էլ նրա եղբոր՝ WBA-ի, WBO-ի եւ IBF-ի վարկածներով չեմպիոնական գոտու տեր Վլադիմիրի հետ: Վերջին անգամ Հեյը ռինգ է դուրս եկել անցյալ տարվա հուլիսի 14-ին՝ 5-րդ ռաունդում նոկաուտի ենթարկելով Դերեկ Չիսորային:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

## Դատարան ներկայանալու ծանուցագիր 36575-12-11
## Հայֆայի շրջանային դատարան

The Haifa District Court House

Հայցվոր՝ HaPoalim, ՍՊ բանկի, Հիպոտեկային բաժին
Hacham, Ram եւ Partners իրավաբանական գրասենյակի միջոցով, որի հասցեն դատական փաստաթղթեր ներկայացնելու համար հետեւյալն է՝ Իսրայել, Հերզլ փողոց 23բ, ԱԱ 3133, Հադերա, փոստային ինդեքս՝ 38131, հեռ.՝ (00972) 04-6186666, ֆաքս՝ (00972) 04-6186677 (Israel, Herzl Street 23B, PO Box 3133, Hadera, postal code 38131. Tel. (00972) 04-6186666, Fax (00972) 04-6186677):

Ընդդեմ
Պատասխանողներ՝

1. Մանվել Սարգիսյան, Իսրայելական ինքնության հաստատման համարը՝ 309639490

2. Ֆավեր Մարինա, Իսրայելական ինքնության հաստատման համարը՝ 303447155
Ուղղված՝ պատասխանողներին

Տեղեկացնում ենք ձեզ, որ 2011 թվականի դեկտեմբերի 20-ին հայցվորը ձեր դեմ ներկայացրել է դատարան ներկայանալու ծանուցագիր անշարժ գույքի սեփականության վերաբերյալ՝ գրանցված որպես Հողամաս 91/1 Բլոկ 10864-ում, որը գտնվում է Հայֆա, Բարզիլեյ փողոց 17 հասցեում: Սույնով խնդրվում է, եթե անշուշտ մտադիր եք արձագանքել, ի պատասխան սույն դատական ծանուցագրի՝ ներկայացնել դատարան երդմամբ հաստատված գրավոր ցուցմունք սույն տեղեկության հրապարակումից հետո 45 օրվա ընթացքում:
Եթե չպատասխանեք սույն դատական ծանուցագրին, հայցվորը իրավասու կլինի ստանալու ձեր դեմ դատավճիռ ձեր բացակայությամբ:

---

ՀՊՃՀ (ՊՈԼԻՏԵԽՆԻԿ) մարմնակրթության եւ սպորտի կենտրոնը հրավիրում է բոլոր ցանկացողներին մարզվելու կենտրոնում գործող հետեւյալ խմբակներում՝ լող, բազկամարտ, սեղանի թենիս, բասկետբոլ, աթլետիզմ: Ձեզ հետ կաշխատեն բարձրակարգ մասնագետներ: Ցանկացողներին խնդրում ենք զանգահարել 010567784: Հասցե՝ Տերյան 105, ՀՊՃՀ, 21-րդ մասնաշենք:

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Պատվիրատու՝ «Հայաստան» համահայկական հիմնադրամը /ք. Երևան, Կառավարական 3-րդ շենք/, չեղյալ է հայտարարում ս.թ. մարտի 18-ին հայտարարված ԼՂՀ Շուշիի շրջանի Քարին Տակ գյուղի համայնքային կենտրոնի կառուցման աշխատանքների իրականացման մրցույթը:

***«Հայաստան» համահայկական հիմնադրամ***

## «Սպորտի աշխարհ» հիմնադրամի հաշվետությունը 2012 թ. գործունեության մասին

«Սպորտի աշխարհ» հիմնադրամը գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից 17.05.07 թ.-ին, գրանցման համարն է՝ 222.160.00721, վկայականի թիվը՝ 03 Ա 075 169, գտնվելու վայրն է ք. Երեւան:

«Սպորտի աշխարհ» հիմնադրամի 2012 թ. ֆինանսավորման աղբյուրն է հիմնադիր Ավետիք Աբրահամյանը:

Հիմնադրամի հնարավոր շահառուներն են՝

Մարզիկներ, մարզիչներ, մարզական դպրոցներ, սոցիալապես անապահով ընտանիքներ, գիտության, կրթության, մշակույթի եւ արվեստի գործիչներ, դպրոցականներ, ուսանողներ, հաշմանդամներ, մանկապարտեզներ, ծերանոցներ, մանկատներ, հիվանդանոցներ:

Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամներն են՝

Ավետիք Աբրահամյան
Մարինե Սարգսյան
Աննա Աբրահամյանը:

Հիմնադրամի աշխատակիցների թիվը առ 31.12.12 թ. կազմում է 2 մարդ:

Ֆինանսական տարվա ընթացքում օգտագործված միջոցների ընդհանուր չափը կազմել է 4 151 733 (չորս միլիոն հարյուր հիսունմեկ հազար յոթ հարյուր երեսուներեք) դրամ,

- դրանցում վարչակառավարչական ծախսերը կազմում են՝ 3 093 733 (երեք միլիոն իննսուներեք հազար յոթ հարյուր երեսուներեք) դրամ,

- ֆինանսական օգնությունները կազմում են 1 058 000 (մեկ միլիոն հիսունութ հազար) դրամ

Հոգաբարձուների խորհրդի անդամները չեն օգտվել հիմնադրամի միջոցներից:

*Տնօրեն՝* *Ռ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ*
*Հաշվապահ՝* *Ս. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ*

---

Կավարը Հավելված N1
ՀՀ Արդարադատության նախարարի
2009թ. դեկտեմբերի 22-ի
N 319-Ն հրամանի

Ձև

**ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ և ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ**

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**«Արշավիր և Պայծառ Աբրահամյաններ» Բարեգործական Հիմնադրամի 2012թ. գործունեության մասին**

1.Հիմնադրամի լրիվ անվանումը՝ **«Արշավիր և Պայծառ Աբրահամյաններ» ԲՀ**

**2.** Հիմնադրամը գրանցված է ՀՀ Արդարադատության նախարարի **,,10,,փետրվարի 2000թ. թիվ 301** հրամանով, Հիմնադրամը գրանցված է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից **,,10,,փետրվարի 2000թ,** պետական գրանցման վկայական **03Ա064907,** գրանցման թիվ **222.160.0032:**

**3.** Հիմնադրամի գտնվելու վայրը՝ **Վայոց Ձորի մարզ, գ.Մալիշկա,** հեռախ. **2-55-39**

**4.** Հիմնադրամի գործադիր մարմնի ղեկավարը՝
**Սուրեն Սարգսյան,հաշվարկված է աշխատավարձի ձևով 2400000 /երկու միլիոն չորս հարյուր հազար /դրամ**

**5.** Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամները՝
**Արշավիր Աբրահամյան, չի օգտվել հիմնադրամի միջոցներից**
**Սառա Վրթանեսյան, չի օգտվել հիմնադրամի միջոցներից**
**Եղիշե Դանիելյան, չի օգտվել հիմնադրամի միջոցներից**

**6.** Աշխատակազմը՝
**Գոհար Բաղդասարյան,հաշվարկված է աշխատավարձի ձևով, 1680000 /մեկ միլիոն վեց հարյուր ութսուն հազար /դրամ**

**7.**Իրականացված ծրագրերը՝
**ա/ Օգնություն պատերազմի վետերաններին և համայնքի անապահով խավին,**
**բ/ Հիմնադրամի բարեգործական ճաշարանի ֆինանսավորում,**
**գ/ Սուրբ և Կենարար Աստծո Խաչի ռուս Ուղղափառ եկեղեցու կառուցման ֆինանսավորում,**
**դ/ Սուրբ ԱՆՆԱ եկեղեցու և կից կառուցված շինության նվիրատվությունը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին:**

**8.** Ֆինանսավորման աղբյուրները՝
**ա/ « ԼԵԿՎՈՒԴ» ՍՊԸ, ֆինանսական օգնություն 43 142.0 հազ.դրամ**
**գ/ «Սոգլասիե Արմենիա» ՍՊԸ, ֆինանսական օգնություն 2 150,0 հազ.դրամ**

**9.** Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը՝
**224 206,0 /երկու հարյուր քսանչորս միլիոն երկու հարյուր վեց/ հազ.դրամ**

**10.** Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը՝
**211 694,0 /երկու հարյուր տասնմեկ միլիոն վեց հարյուր իննսունչորս/ հազ.դրամ**

**11.**Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի /աուդիտորի եզրակացությունը: /Կցվում է/:

**12.** Հայտնում ենք, որ հաշվետվությունը հաստատվել է հոգաբարձուների խորհրդի կողմից
«14» մարտի 2013թ.

**«Արշավիր և Պայծառ Աբրահամյաններ» ԲՀ**

**տնօրեն** **Ս.Սարգսյան**

**գլխ. հաշվապահ** **Գ.Բաղդասարյան**

---

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

**«Արշավիր և Պայծառ Աբրահամյաններ» ԲՀ**

**գ.Մալիշկա** **01.03.2013թ.**

1.Հիմնադրամը 2013թ.-ի ընթացքում չի ընդհատելու իր գործունեությունը:
2.Ընկերությունը կատարել է գույքագրում 01.01.2013թ. դրությամբ, ավելցուկներ և պակասորդներ չեն հայտնաբերվել:
3. Հիմնադրամը 2013թ-ի դրությամբ գրավադրված գույք չունի:
4. Հիմնադրամում կապակցված կողմեր չկան:
5. Հիմնադրամի հաշվապահությունը կազմված է գլխավոր հաշվապահից և գանձապահից:
6 Հիմնադրամը չունի անհուսալի դեբիտորական և կրեդիտորական պարտքեր:

**«Արշավիր և Պայծառ Աբրահամյաններ» ԲՀ**

**տնօրեն - ------------- Ս.Սարգսյան**

---

### Անկախ աուդիտորական եզրակացություն

**«Արշավիր եւ Պայծառ Աբրահամյաններ» բարեգործական հիմնադրամի**

*2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտված տարվա Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ*

***Ներկայացվում է «Արշավիր եւ Պայծառ Աբրահամյաններ» բարեգործական հիմնադրամի Հիմնադիրների խորհրդին***

2013թ. մեր կողմից իրականացվել է Արշավիր եւ Պայծառ Աբրահամյաններ բարեգործական հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, որոնք ներառում են 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի, նույն ամսաթվին ավարտվող տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին եւ դրամական հոսքերի մասին հաշվետվությունները:

**Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար**

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման եւ ճշմարիտ ներկայացման համար: Այդ պատասխանատվությունը ներառում է էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների կազմումը, խարդախությունների եւ սխալների կանխման նպատակով համապատասխան ներքին վերահսկողության համակարգի մշակումը եւ կիրառումը, համապատասխան հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրությունը եւ կիրառումը, ինչպես նաեւ համապատասխան հիմնավորված գնահատումների իրականացումը:

**Աուդիտորի պատասխանատվությունը**

Մենք պատասխանատու ենք մեր կողմից իրականացված աուդիտի հիման վրա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ արտահայտված կարծիքի համար:

Աուդիտորական աշխատանքներն ներառում են ֆինանսական հաշվետվություններում ու համապատասխան ծանոթագրություններում արտացոլված տվյալները հիմնավորվող փաստերի ձեռքբերման նպատակով մշակված ընթացակարգեր, որոնց ընտրությունը կախված է խարդախությունների եւ սխալների հետեւանքով ֆինանսական հաշվետվություններում էական խեղաթյուրումների, ռիսկերի առկայության վերաբերյալ աուդիտորական գնահատումներից: Ռիսկերի գնահատումները կատարելիս աուդիտորը մշակում է համապատասխան ընթացակարգեր ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար կիրառվող ներքին վերահսկողության գնահատման, այլ ոչ թե ընկերության ողջ ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք կազմելու համար: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաեւ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների եւ ղեկավարության կողմից կատարված գնահատումների, ինչպես նաեւ ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ մեր կարծիքը արտահայտելու համար:

**Կարծիք**

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ֆինանսական վիճակը, այդ ամսաթվին ավարտվող տարվա համապարփակ ֆինանսական արդյունքները եւ դրամական հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

19 մարտի 2013թ.

«Փըրֆեքթ Աուդիտ» ՍՊԸ
Տնօրեն /աուդիտոր **Ա.Բաբայան** աուդիտոր **Դ. Խաչատրյան**
Տ.գ.թ.

ՀՀ, ք. Երեւան, Տիգրան Մեծի 4

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 18.3.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: